

**ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ**

**ՍԱՌՑԱՐԱԸ  
 ՅԱՌԱՋԱՑՆՈՂ  
 ԽՍՈՐՈՒՄՆԵՐՈՒ  
 ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ**

**ՏՕԳՔ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Մեր նախորդ առաջնորդող յօդուածին մէջ անդրադարձած էինք որպէս թէ Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սկսած սառցաձալի մը մասին: Թուրքիոյ մէջ լոյս տեսնող տարածում օրաթերթերէն «Հիւրի-յէթ»-ի սիւնակագիրներէն Ուղուր Էրկանի Յուլիսի վերջին շաբթուան մէջ ստորագրած մէկ յօդուածէն օգտուելով, անդրադարձած էինք կարգ մը շօշափելի երեւոյթներու մասին, որոնք համաձայն յօդուածագրին, կու գային ցոյց տալու թէ «սառքը սկսած են հալիլ Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ...»:

Համաձայն Ուղուր Էրկանի, Թուրքիոյ իշխանութիւնները թոյլատու վերաբերմունք կը ցուցաբերէին Հայաստանի այն քաղաքացիներուն հանդէպ, որոնք ապօրէն կերպով կ'աշխատէին Թուրքիոյ հողամասին վրայ:

Թէ՛ Հայաստանէն Թուրքիա սկսած գրաստիկութիւնը կը գարգանար տարուէ տարի, քառասուն հազարէն եօթանասուն հազարի հասցնելով զայն:

Թէ՛ Հայաստանի նախագահը, իր պաշտօնակից նախագահ Կիւրի Սուսուան Հայաստան այցելելու հրաւերը Հայաստան-Թուրքիա ֆուտպոլի խաղը միասին դիտելու կապակցութեամբ՝ կը յուշէր դրական ենթադրութիւններ:

\*\*\*

Այդ քանի մը դիպուկ երեւոյթներու վրայ պիտի գար քարոզելու Մոսկուայի մէջ Սերժ Սարգսեանի կատարած անսպասելի, զգայացունց, այլապէս արտաոտոց՝ ծաւոթ յայտարարութիւնը, թէ Հայաստան կը կրնար համաձայն գտնուիլ հայոց դէմ կատարուած ճեղքասպանութեան Յանձնախումբի մը կազմութեան գծով Թուրքիոյ կատարած առաջարկութեան, եթէ Թուրքիա վերցնելու ըլլար Հայաստանի շրջափակումը:

Տարիներ քաղաքական կեանքէն ետք, կ'ենթադրենք, միջազգային փորձառութիւն ձեռն ձգած անձնաւորութիւն, մեր ազգային սրբազան ձգտումներուն քաջամարտիկ վերջապէս հայու պահանջատիրութեան եւ հայ մարդու գերազանցապէս զգայուն կէտերուն ծանօթ հասարակական գործիչ՝ Ինչ քարեմտութիւն պիտի ըլլար մերը, հաւատալու թէ «նորընտրի», Մոսկուա ունեցած անպատասխանատու յայտարարութիւնը գրագրական սխալի վերագրուէր, թէ «այդպէս ըսած չէր», «թէ այդպէս ըսած էր», թղթակիցներ սխալ

Շաբ.ը էջ 17

**ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆ ՅԵՏ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԻՄԱՍՏ ՉՈՒՆԻ**

Իր պաշտօնավարութեան 100-րդ օրուայ առթիւ, Սերժ Սարգսեանը հրաւիրած էր մամուլի ասուլիսի մը, որու ընթացքին ան յայտարարեց թէ, ընդդիմութեան հետ երկխօսութեան մէջ իմաստ չի տեսներ: «Ինչի՞ մասին մենք պիտի երկխօսենք: Եթէ մարդկանց պահանջը, եթէ մարդկանց նպատակը նոր ընտրութիւններ անցկացնելն է, ինչի՞ մասին մենք պիտի երկխօսենք. թէ ե՞րբ անցկացնենք այդ ընտրութիւնները: Ես արդէն յօգնել եմ ընտրութիւններին», - յայտարարեց Սերժ Սարգսեանը:

«Երբ ես ասում եմ երկխօսութիւն, ես նկատի ունեմ երկխօսութիւն ժողովրդի հետ, ես նկատի ունեմ երկխօսութիւն հասարակութեան ներսում, ես նկատի ունեմ երկխօսութիւն պետութիւն - հասարակութիւն ֆորմատով, եւ ոչ թէ երկխօսութիւն հանրապետութեան նախագահի եւ ուրիշ անհատի միջեւ», շեշտեց Սարգսեան:

Քաղաքական բանտարկեալներու մասին հարցերուն պատասխանելով Սարգսեան ըսաւ, «Ինչ վերաբերում է նրան, թէ մի զանգով կարելի է տաննակ մարդկանց ազատ արձակել, ապա ես սովոր չեմ այդպէս աշխատել, եւ դա շատ վատ գալթակցութիւն է: Որովհետեւ մի զանգով տաննակ մարդկանց ազատ արձակելը նշանակում է նաեւ մի զանգով տաննակ մարդկանց ազատագրել»:

Հարցին, թէ որքանով ճիշդ են այն տեղեկութիւնները, որ երկիրը իրականութեան մէջ կը ղեկավարէ Ռոբերտ Քոչարեանը, Սերժ Սարգսեանը պատասխանեց. «Պետութեան կառավարումը դա բիզնեսի կառավարում չէ, որտեղ

հարաւոր է գործադիր տնօրէնի նշանակում, իսկ սեփականութեան իրաւունքները կարելի է պահել եւ ղեկավարել այդ բիզնեսը: Իսկ որոշումներ կայացնելու, անշուշտ, ես խորհրդակցում եմ ինչպէս Քոչարեանի, այնպէս էլ իմ կողմից: Գործընկերներ չեմ, խորհրդակցում եմ մասնագէտների հետ: Սա է իմ աշխատանքը: Բայց իմ որոշումների պատասխանատուն ես եմ»:

Սերժ Սարգսեան հերքեց նաեւ մամուլի մէջ լոյս տեսած այն հրապարակումները, թէ լուրջ տարածաշրջաններ կան իր եւ Քոչարեանի միջեւ, մասնաւորապէս, թէ՛ Քոչարեանը քննադատած է Սարգսեանին՝ Թուրքիոյ նախագահը Հայաստան հրաւիրելուն համար:

«Ես կարծում եմ, որ Քոչարեանի յայտարարութիւնը իր մէջ բացարձակապէս որեւէ քննադատութիւն չի պարունակում: Ուղղակի նախագահ Քոչարեանը իր անհամաձայնութիւնն է յայտնել իմ կողմից քայլի նկատմամբ», - ըսաւ ան: «Նախկինում էլ բոլոր հարցերում չէ, որ մենք միակարծիք ենք եղել»:

Խօսելով Թուրքիոյ հետ յարաբերութիւններու մասին Սերժ Սարգսեան ըսաւ. «Կարելի է այն է, որ ե՛ւ մեր, ե՛ւ Թուրքիան հասարակութիւնում նշմարում են մեր պրոբլեմների առողջ քննարկման միտումներ: Եւ ես վստահ եմ, որ նախագահ Գիւլի այցը Հայաստան այս դրական միտումները կարող է վերածել լաւ, կայուն շարժման»:

«Ես համարում եմ, որ ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Թուրքիայում մեր յարաբերութիւնների բարելավման կողմնակիցները շատ աւելին են, քան դէմերը», - եզրակացուց Սերժ Սարգսեան:

**ԼՈՒՐԵՐ ԶԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԲԻԱ ԳԱՂՏՆԻ ԶԱՆԴԻՊՈՒՄԻ ՄԱՍԻՆ**

Թրքական «Հիւրի-յէթ» օրաթերթի փոխանցմամբ՝ Զուլիքերիոյ մայրաքաղաք Պեռնի մէջ, Յուլիս 8-ին տեղի ունեցած է Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւններու բարձրաստիճան պաշտօնեաներու հանդիպումը: Թուրք դիւանագէտներու պատուիրակութեան ղեկավարը Թերթին ըսած է, որ «հանդիպումը անցած է դրական մթնոլորտի» մէջ:

«Հիւրի-յէթ»-ի գլխաւոր խմբագիր էրթուղուլ Օզքոկի համաձայն՝ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան մէկ պաշտօնեան հաստատած է հանդիպման մասին լուրը, սակայն խնդրած է զայն չհրատարակել: «Ան ինձի ըսաւ, որ եթէ լուրը հրատարակուի, այն կ'ընայ հերքուիլ», - իր ամենօրեայ սիւնակին մէջ գրած է խմբագիրը:

Թրքական թերթը կը տեղեկացնէ, որ հայ եւ Թուրք պաշտօնեաներու հանդիպումը տեղի ունեցած է Սերժ Սարգսեանի վերջին աղմկաշարժից յայտարարութիւններու լոյսին տակ:

Ինչ կը վերաբերի Թուրքիոյ նախագահ Ապտուլլահ Գիւլի երեւան այցելութեան հրաւերին, Թուրք պաշտօնեաները ըսած են, որ հրաւերը ստացուած է եւ այս պահուն կը քննարկուի, ու բացառուած չէ, որ ընդունուի:

**ԴՈՒՐՍ ԳԱԼՈՎ ԲԱՆՏԵՆ ԳՈՒՐԳԵՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ. «ԲՈԼՈՐ ԱԶԱՏԱԶՐԿՈՒԹՆԵՐԸ ԶԱՒԱՏՈՒՄ ԵՆ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ»**

Ազգային Անվտանգութեան վարչութեան պետի նախկին տեղակալ Գուրգէն Եղիազարեան, որ ընտրութիւններուն յաջորդած գործադրումներուն առթիւ 4,5 ամիչ բանտը կը գտնուէր, Յուլիս 21-ին ազատ արձակուեցաւ՝ խափանման միջոցը փոխուելու բացատրութեամբ:

Բանտէն դուրս գալով, Գուրգէն Եղիազարեան առաջին հերթին այցելեց Հիւսիսային պողոտայի վրայ շարունակուող նստացոյցի մասնակիցներուն եւ հոն իր ունեցած ելոյթի ընթացքին յայտարարեց՝ «Բոլոր ազատագրուածները մի մարդու նման հաւատում են յաղթանակին: Ոչ մի կոտորած մարդ չկայ: Սովորաբար մարդիկ կոտորում են առաջին օրը, երկրորդ օրը, մէկ շաբաթ յետոյ, սակայն այս անգամ մեզանից ունէ

մէկը չկոտորուեց եւ աւելի ամրապնդուեցինք՝ ձեզանից իւրաքանչիւրի շնորհիւ: Մենք պարտադրուած ենք յաղթել»:

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան գրասենեակէն ներս հանդիպելով լրագրողներուն հետ, Եղիազարեան յայտարարեց որ ինք ընկճուած է, քանի որ, դուրս գալով կալանավայրէն այնտեղ կը մնան իր ընկերները:

«Մարտի 1-ի Գուրգէն Եղիազարեան Հիւսիսային պողոտայի դէպքերի թէ՛ առաւօտեան, թէ՛ երեկոյան ես եւ իմ ընկերներին ոչ մէկը ընդհանրապէս ոչ մի կապ չենք ունեցել այդ ամէն ինչի հետ», - յայտարարեց



Եղիազարեան: Գուրգէն Եղիազարեանի նկատմամբ յարաբերութիւններուն հետ հանդիպման ընթացքին

Շաբ.ը էջ 4



ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱՀԱՒԱՔԸ ՎԱՆԱՃՈՐՈՒՄ ԱՆՑԱԻ ՀԱՆԳԻՍՏ ԵՒ ԽԱՂԱՂ



Տեսարան մը Վանաձորի հանրահավաքին

Յուլիսի 18-ին, Վանաձորում տեղի ունեցավ հանրահավաք, որը կազմակերպել էր Հելլինքեան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենեակի նախաձեռնությամբ:

«Վանաձորցիներին հասանելի որեւէ լրատուամիջոց մանրամասնորէն չի ներկայացնում 1609 եւ 1620 Երկրի բանաձեւերի ընթացքը: Մտում է միայն հանրահավաքը, որի միջոցով կարելի է տեղեկ պահել մեր քաղաքացիներին երկրում տեղի ունեցող իրադարձութիւնների մասին իրաւապաշտպան կազմակերպութեան տեսանկիւնից»- նշեց գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը:

Հանրահավաքին ներկայ էին մի շարք կուսակցութիւնների ներկայացուցիչներ, այդ թւում՝ «Ժառանգութեան» եւ Համաժողովրդական Շարժման:

Մասնաւորապէս, հանրահավաքին իրենց մասնակցութիւնը ցուցաբերեցին Դաւիթ Շահնազարեանը, Վարդան Խաչատրեանը, Արամ Նազարեանը, Զարուհի Փոստանջեանը, Ալեքսանդր Ալեքեանը, Գառնիկ Սահակեանը:

ՀՀԿ կուսակցութեան ներկայացուցիչ Արամ Նազարեանը դժգոհութիւն յայտնեց, որ հանրահավաքը կազմակերպուել է Շաուր Ազնա-

ւուրի անուան մշակույթի պալատի յարող տարածքում:

«Մենք հանրահավաքներ պէտք է անենք միայն Արցախի պուրակում, որտեղ հաւաքուել ենք 88թ.»-ասաց նա: Գիւմրիից Վանաձոր էր ժամանել «Ապարէզ» ակումբի ղեկավար Լեւոն Բարսեղեանը, որն իր ելույթում նշեց.

«Եւրոպայի խորհուրդի մարդիկ մեր իշխութիւնների նման են: Վեհաժողովի 1609 բանաձեւով որոշուել էր, որ Հայաստանում պէտք է մի քանի փոփոխութիւններ կատարուեն երկու ամսուայ ընթացքում, հակառակ դէպքում Հայաստանի պետութեան վատահիւսութիւնը կը դուրսի կասկածի տակ, սակայն Չամիսը անցել է, եւ ոչ մի կէտը չի համապատասխանում պահանջներին: Պատժելու փոխարէն նրանք նոր բանաձեւ առաջ քաշեցին՝ 1620-ը»:

Դաւիթ Շահնազարեանն իր ելույթում նշեց, որ, ըստ էութեան, Համաժողովրդական շարժումը իսկապէս համաժողովրդական է, եւ իշխանութեան հարցը իրաւաբանօրէն կ'որոշուի.

«Չկայ ճեղքուած հասարակութիւն, կա միաւորուած հասարակութիւն: Այս փուլը կը վերջանայ նախագահական նոր ընտրութիւններով»:

ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՔՆՆԱՐԿԻ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՊԱՅԱՆՁՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՍԿՍԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Եթէ Սերժ Սարգսեանը չկատարի ընդդիմութեան վերջին հանրահավաքում իշխանութեանը ներկայացուած 4 հիմնարար պահանջները, ապա Օգոստոսի 1-ին ընդդիմութիւնը կը քննարկի նրա հրաժարականի խնդրով զանգուածային միջոցառումներ անցկացնելու հարցը եւ շարժման գլխաւոր կարգախօսը կը դառնայ նրա հրաժարականը կամ պաշտօնանկութիւնը: Այս մասին լրագրողներին յայտարարեց «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհրդի անդամ Սուրէն Սուրէնեանց, որը լրագրողներին հետ հանդիպման էր եկել բաւականին յոգնած, քանի որ ամբողջ գիշեր անցկացրել է Հիւսիսային պողոտայի նստացոյցում:



«Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհրդի անդամ Սուրէն Սուրէնեանց

Նրա ասելով՝ իշխանութիւնները մինչեւ Օգոստոսի 1-ը 14 օր ժամանակ ունեն: «Մենք շատ հնարաւորութիւններ ենք տուել նրանց դրական որեւէ քայլ անելու համար, բայց դժբախտաբար ոչ մի բան չի արուել: Կարող ենք արձանագրել, որ Հայաստանում այսօր չկայ նոր իշխանութիւն եւ Սերժ Սարգսեանը կատարում է Քոչարեանի ստեղծուած արատաւոր համակարգի մենջերի պարտաւորութիւնները»,- յայտարարեց Սուրէնեանցը:

Ըստ նրա՝ պաշտօնավարման 100 օրուայ ընթացքում Սերժ Սարգսեանը դրական ոչ մի քայլ չի արել. ընդհակառակը՝ սոցիալական բեւեռացման խորացում, խայտառակ, աննախադէպ պարտութիւններ ԼՂՀ հարցում: Նրա միակ դրական քայլը Սուրէնեանցը համարեց հայ-թուրքական յարաբերութիւնների վերականգնման փորձը, թէեւ գաղտնիորէն էր հայտնաբերուել եւ արժեզրկուել է: «Սարգսեանը ըստ էութեան ընդունեց թուրքական կողմի առա-

ջարկը՝ պատմաբաններից կազմուած յանձնաժողով ստեղծելու մասին, մինչդեռ ՀՀ նախագահը պարտաւոր էր այլ ձեւաչափ առաջարկել՝ ստեղծել հաշտեցման յանձնաժողով: Ես չեմ հաւատում Սարգսեանի անկեղծութեանը հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցում, քանի որ դեռ մնացել է քոչարեանական համակարգը, թէեւ Սարգսեանի մօտեցումները մի քիչ տարբերուած են նրա առաջարկածից, բայց կոնցեպտուալ չեն»,- կարծում է Սուրէնեանցը՝ այնուհետեւ աւելացնելով. «Ես շատ կ'ուզեմ, որ Սարգսեանն արժանապատիւ ձեւով կարողանայ լուծել հարցերը վերականգնել, ոչ թէ իր տուած ակցենտով, այլ իմ նշած բանաձեւով, որտեղ դրմինստոն են լինելու երկու երկրների զարգացման հեռանկարները»:

«ԱՌՆՈՒԱԶՆ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ Է»

«Իմ խորին համոզմամբ, առնուազն անբարոյականութիւն է իմ եւ այստեղ հաւաքուածների հարկերի հաշուին պետական բիւջէից 100 հազարաւոր դրամներ փոխանցել կոնկրետ քաղաքական նպատակներ ունեցող երիտասարդական մի կառուցի՝ տասն օրուայ տուսովկայի համար, ու այն էլ մի այնպիսի երկրում, որտեղ սոցիալական պաշտպանութեան ծրագրերը գտնուում է գրոյական մակարդակի վրայ, որտեղ անվճար սովորող ուսանողին թոշակ են վճարում 5000 դրամ: Ես չեմ ընդունում, որ կարելի է տասն օրուայ քաղաքականացում հաւաքի

համար ահուկի գումարներ ծախսել, եթէ դրանք ծախսուած են ոչ թէ կուսակցութեան այլ, քաղաքացու հաշուից», - Յուլիս 23-ին լրագրողներին հետ հանդիպման ժամանակ համահայկական «Բազէ» հաւաքի մասին այսպիսի կարծիք յայտնեց ՄԻՉԿ «Սարգիս Տխրունի» ուսանողական միութեան ղեկավար Նարեկ Գալստեանը: «Բազէ»-ի քաղաքականացումը լինելու շուրջ հնչակեաններն ու հանրապետականներն այսօր երկար բանավիճեցին, սակայն վերջում բաժանուեցին՝ իւրաքանչիւրը մնալով իր նախնական կարծիքին:

ԼԵՒՈՆ ԽԵՉՈՅԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՊԻՏԻ ՊԱՇՏՊԱՆԵՐ ՔԱՂԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Ժամանակակից սիրուած հայ գրողներից մէկը՝ Լեւոն Խեչոյեանը, ով չի մասնակցել անցած շաբաթ Երեւանում կայացած Գրողների համահայկական համաժողովին, համարում է, որ նման համաժողովը պէտք է բարձրացներ ու լուծեր այնպիսի խնդիրներ, որ «այսօր ազգի համար կենաց-մահու էլեմենտներ են պարունակում»:



Գրող Լեւոն Խեչոյեան

«Գրողը խղճի ճանապարհով լոյսի գինուտորն է», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում ասաց Խեչոյեանը, - «[Ուստի] համաժողովը ճիշդ կ'անէր, որոշում կայացներ իշխանութիւններին ուղղուած, որպէսզի բոլոր քաղաքացիներին ազատէին բանտերից: Առաջին հերթին այդ խնդիրը պիտի դրուէր»:

պիտի դնէին մշակութային ժամանակաշրջանի ստեղծելու... Մենք ասում ենք «մէկ ազգ՝ մէկ մշակույթ», բայց անցեալ էպոխայի մեր պրոբլեմները քարշ ենք տալիս

հիմա էլ այս դար: Ո՞նց կարող է լինել մէկ մշակույթ, մէկ ազգ, երբ հիմա ունենք ուղղագրութեան խնդիրը: Մենք պիտի վաղ թէ ուշ անցնենք մեր նախկին, աւանդական ուղղագրութեանը: Ո՞նց կարող է լինել «մէկ ազգ՝ մէկ մշակույթ», երբ ունենք երկու եկեղեցի, երկու կաթողիկոս... Սրանք հարցեր են, որ պիտի համագումարը այս հարցերին մօտենար, ազգի համար կարեւոր նշանակութիւն ունեցող հարցեր են»:

յանձնուէր Արցախում: «Ես հրաժարուել եմ, որովհետեւ, եթէ երկրում կան քաղաքատարկեալներ, ուրեմն չէի կարող ես որեւէ մեղալ կամ շքանշան ստանալ, առաւել եւս՝ որ այդ [կալանաւորուած] ազատամարտիկներից շատերը իմ մարտական ընկերներն են», - պարզաբանեց նա: Հարցին, թէ ո՞րն է այսօր հայ գրողի խնդիրը, Խեչոյեանը արձագանքեց. - «Միակ բանը, որ գրողը կարող է գտնել, դա ազնիւ խօսք ասելն է: Գրողը պէտք է արգելադրուի նախ քան իր խօսքն է... Այսօր ազնիւ խօսքի կարիք կա, պահանջարկ կայ»:



ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԸ «ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ» ՕԳՆՈՒԹԵԱՄԲ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԲԱՐԵԼԱԲԵԼ ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԵՈՐԳ ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆ

«Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը «Ֆուտբոլային դիվանագիտություն» օգնություն է ցանկանում է բարելավել հայ-թուրքական յարաբերությունները», - գրում է «Ազատություն» ռադիոկայանի մեկնաբան Բրայան Ուիթմորը:

Անդրադառնալով Յունիսի 23-ին Մոսկվայում Սերժ Սարգսյանի հնչեցրած նախաձեռնությունը՝ Աբդուլա Գիլիին Հայաստան - Թուրքիա ֆուտբոլային հանդիպմանը ներկայ գտնուելու հրաշքին, Ուիթմորն այն նմանեցնում է անցած դարի 70-ականների սկզբին՝ Չինաստանի եւ Միացեալ Նահանգների յարաբերությունների աստիճանական բարելավման գործընթացին, այն մեկնարկեց երկու պետությունների սեղանի թեմիսի հաշտության հանդիպումների անցկացումով՝ ստանալով «պինգ-պոնգային դիվանագիտություն» անունով:

Վերլուծաբանների ուշադրությունն է սակայն, չի վրիպում այն հանգամանքը, որ Սերժ Սարգսյանի յայտարարությունները հնչեցին Մոսկվա կատարած պաշտոնական

այցի ընթացքում, այն էլ՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի՝ Թուրքիա կատարելիք այցից մի քանի օր առաջ:

Հայ-թուրքական հաշտեցման շնորհիվ Մոսկվայում նախկին անդամ, Միրիայում Հայաստանի նախկին դեսպան Դաւիթ Յովհաննիսյանը չի բացառում, որ պաշտոնական Մոսկվայում որոշել է խախտել տարիների ընթացքում ձեւավորված այն վիճակը, երբ հայ-թուրքական յարաբերությունների բարելավման հարցը ամբողջապես դիվանագիտության օրակարգում էր:

«Ռուսական դիվանագիտությունն այսօր խնդիր ունի՝ ամերիկացիների ձեռքից խլել հայ-թուրքական յարաբերությունների բարելավման նախաձեռնությունը», - «Ազատություն» ռադիոկայանին ասաց Յովհաննիսյանը:

Գրեթէ նոյն տեսակետին է վաշինգտոնում գործող Ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի թուրքական ծրագրերի տնօրեն Բիլլեյնթ Ալիբերդի, որի համոզմամբ՝ այսօր պաշտոնական Մոսկվայում դեմ է հայ-թուրքական երկկողմ յարա-

բերությունների ջերմացմանը. - «Մոսկվայում լաւ յարաբերություններ է զարգացրել Անկարայի հետ եւ պատրաստ է շարունակել նոյն ոգով՝ առանց բարդությունների բախուելու, բարդություններ, որոնք կարող են ի յայտ գալ Ռուսաստանի՝ Երեւանին ցուցաբերած ջանքերի փաստից»:

Իսկ Հայաստանի մայրաքաղաքում գործող լրատվամիջոցների կովկասեան ինստիտուտի դեկան Ալեքսանդր Իսկանդարեանը խորհուրդ է տալիս չմոռանալ տարածաշրջանում առկա ռուսական գործարար շահերի մասին. - «Եթէ ճանապարհ դէպի Թուրքիա բացուի, եթէ հաստատուեն դիվանագիտական յարաբերություններ, Հայաստանում գտնուող ռուսական կապիտալը կարող է օգտուել դրանից՝ դուրս գալով հարեւան թուրքական շուկայ: Սա պէտք է հաշուի առնել, քանի որ ռուսական ներդրումների ծաւալը Հայաստանում բաւական մեծ է: Բացի այդ, սահմանի բացումը կ'ընդլայնի մերձաւորարեւելեան եւ հարաւերոպական շուկայ դուրս գալու ռուսական ընկերությունների հնարաւորությունները»:

Իսկանդարեանը նաեւ չի բացառում, որ հայ-թուրքական յարաբերությունների բարելավման հեռանկարին Ռուսաստանը սկսել է ըմբռնումով մօտենալ՝ տարածաշրջանում իրավիճակի փոփոխութեան պատճառով. - «Քանի դեռ Հարաւային Կովկասում Ռուսաստանն այլ դիրքեր ունէր, պաշտոնական Մոսկվային կարող էր եւ ձեռնուող լինել Հայաստանի նման մեկուսացումը: Այժմ, երբ իրավիճակը փոխուել է, Ռուսաստանի համար ստեղծուած կացութիւնը գուցէ այնքան էլ նպաստաւոր չէ»:

Վերլուծաբանների մի զգալի

մասի կարծիքով, հայ-թուրքական յարաբերություններում առաջնայինը այն խնդիրներն են, որոնց պատճառով երկու պետությունների միջեւ սահմանը շարունակուած է փակ մնալ՝ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութիւնն ու Յեղասպանութեան հարցը:

Ստամբուլում գործող վերլուծական կենտրոններից մեկի՝ Եւրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի Հայաստանի բաժնի դեկան Ամեր Լիւթեմն ասել է. - «Տպաւորութիւն է ստեղծուած, որ Հայաստանում իրօք լրջօրէն հակուած են բանակցութիւնների, բայց առայժմ փոփոխութիւն չկայ ո'չ Ղարաբաղի հարցում նրանց մօտեցումներում, ո'չ էլ Թուրքիայի տարածաշրջանի ամբողջականութեան (ճանաչման) հարցում»:

«Արդեօք նրանք կը հրաժարուեն Յեղասպանութեան մասին պնդումներից, թէ՞ շարունակելու են պայքարել այդ ուղղութեամբ: Արդեօք փոփոխութիւններ լինելու են: Եթէ փոփոխութիւններ չլինեն, ինչպէ՞ս ենք լուծելու այս հարցը», - թուրքական կողմի մտավախութիւններն ի մի է բերում ստամբուլցի վերլուծաբանը:

Այս պայմաններում դեռ յստակ չէ, թէ կ'ընդունի՞ արդեօք Աբդուլա Գիլիը Սերժ Սարգսյանի հրաւերը:

Թուրքական NTV հեռուստաալիքի եթերում Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ալի Բաբաջանը յայտարարեց, թէ «նման մասնակցութիւնը կախուած կը լինի մինչեւ խաղը տեղի ունենալիք զարգացումներից», եւ յաւելեց, որ «Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորումը Թուրքիայի արտաքին քաղաքականութեան լուրջ նպատակներից է»:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹՅԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Անցնող 10 տարիներու ընթացքին, Հայաստանի իրավիճակի կապակցութեամբ շատ շահագործուած ու չարչրկուած բառերէն մին եղած է կայունութիւն բառը: Գործող իշխանութիւնները ջատագոված են այդ մէկը, երկիրը ցնցումներէ հեռու պահելու պատճառաբանութեամբ: Ամէն դժգոհութեան ալիքի բարձրացումին հակազդելով, անոնք ժողովուրդին լիջեցուցած են, որ անկայուն վիճակը պատճառ կը դառնայ երկրէն ներս տնտեսական վիճակի վատթարացման, երկրի արտաքին վարկի վնասման, Արցախեան հարցի կապակցութեամբ մեր դիրքերու տկարացման, եւ այլն: Տեսականօրէն իրաւացի է այդ տեսակէտը: Բայց կայ նաեւ մետալին միւս, աւելի կարեւոր երեսը: Կայունութիւն ի շահ ինչի՞:

Երկրի մը յառաջխաղացքին նպաստող գործօններուն մէջ կայունութիւնը որքանո՞վ առաջնահերթ անհրաժեշտութիւն է, երբ այն կը համեմատենք օրինականութեան եւ ժողովրդավարութեան գործօններուն հետ: Որքանո՞վ հիմնաւոր է այն կայունութիւնը որ խարսխուած է օրինականութեան, արդարութեան եւ ժողովրդավարութեան վրայ: Պատմութիւնը մեզի ցոյց տուած է, որ բոլոր բռնապետական իշխանութիւններն ալ «վայելած» են պարտադիր ու բռնի կայունութեան ժամանակաշրջան մը, որ միշտ ալ յանգած է լեղափոխութեան, որովհետեւ այդ իրավիճակը հակադիր է բնութեան բնականոն ընթացքին:

Հետեւաբար, եթէ մենք իսկապէս մտահոգ ենք մեր երկրի արժանապատիւ ապագայով, անոր տնտեսական վերելքով, արտաքին վարկի բարձրացմամբ եւ Արցախեան հարցի բարձր լուծմամբ, ապա առաջին հերթին պէտք է ստեղծենք երկրէն ներս օրինական, արդար եւ ժողովրդավար իրաւա-

կարգ: Մենք պէտք է քաջ գիտակցինք, որ որեւէ պետութեան կայունութեան աստիճանը պայմանաւորուած է նախ եւ առաջ ժողովուրդի դաւանած արդարութեան, օրինականութեան, ազատութեան եւ ժողովրդավարութեան սկզբունքներու որակով: Հնդկաստանի պետութեան հիմնադիր Մահաթմա Կանտի, այդ կը դաւանէր իր ժողովուրդին, անկախութենէն մօտ 40 տարիներ առաջ հրատարակած իր մէկ գրութեան մէջ: Պոլսոյ Իզմիրլեան պատրիարքը այդ կը դաւանէր մեր ժողովուրդին, երբ Երուսաղէմ աքսորի չմեկնած կը յայտարարէր թէ հոն ուր արդարութիւն չկայ, ամէն հաւատարմութիւն կեղծ է:

Մի քանի օրեր առաջ կարդացինք թէ Հայաստանի «համերաշխութիւն» շարժման համակարգող, ոմն Սարգիս Աւետիսեան յայտարարած է, թէ «աւելի լաւ է երկրում համերաշխութիւն լինի, քան՝ ժողովրդավարութիւն»: Իսկապէս զաւեշտա-ողբերգական արտայայտութիւն մըն է այս մէկը, որ կը մատնէ տուեալ անձին մտածելակերպն ու հասկացողութեան մակարդակը: Առանց ժողովրդավարութեան, որու հիմքերն են ազատութիւնը, հաւասարութիւնը, արդարութիւնն ու եղբայրութիւնը, ինչպիսի՞ համերաշխութիւն կարելի է գոյացնել: Այդպիսի համերաշխութիւնը, իշխանութեան ջատագոված կայունութեան նման, անբնական է, ու հետեւաբար վնասակար երկրի ու ժողովուրդի յառաջխաղացքին: Մեր պատմութիւնը մեզի կը թելադրէ հետեւիլ այն բազմաթիւ հերոսներու օրինակին, որոնք առաքինութիւնը ունեցած են գոհաբերուելու յանուն հայրենիքին ու ազգին, յանուն ազատութեան ու արդարութեան եւ ոչ թէ յանուն կեղծ ու պարտադիր համերաշխութեան ու կայունութեան: Մեր գոյութիւնը առաջիններու գոհաբերութեան կը պարտինք:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լեւոն Տէր-Պետրոսեանի աջակցութեան Ամերիկայի կենտրոնը սոյն թուականի Յուլիսի 29-ին, երեքշաբթի, ժամը 11:00-ին անցկացնելու է բողոքի ցոյց, Հայաստանի Գլխաւոր Զիւլպատոսութեան շէնքի դիմաց: Բողոքի ցոյցին յաջորդելու է նստացոյց՝ Հայաստանի քաղաքատարեալներին անյապաղ ազատ արձակելու պահանջով:

Կոչ ենք անում մեր բոլոր հայրենակիցներին մասնակցելու այս բողոքի ցոյցին՝ մէկ անգամ եւս հաստատելու, որ քանի դեռ Հայաստանում գոյութիւն ունեն քաղաքատարեալներ ու քանի դեռ Մարտի 1-ի սպանդի իսկական հեղինակները պատասխանատուութեան չեն կանգնուել՝ մեր պայքարը շարունակուելու է:

Նստացոյցին մասնակցել ցանկացողները կարող են գանգահարել եւ ցուցակագրուել՝ միանալով քաղաքատարեալների հարազատների ու արդէն իսկ ցուցակագրուած մեր միւս հայրենակիցներին:

Լեւոն Տէր-Պետրոսեանի աջակցութեան ԱՄՆ-ի կենտրոնի լրատուական ծառայութիւն  
22 Յուլիսի 2008թ.

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՀԱՐՑԱԶՐՈՅ

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՉՐՈՅՑ ԻՐԱՔԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԱԼԱԳ ԱՐՔԵՊՍ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ ՇԵՏ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Քանի մը օրեր առաջ, հրաւէրովը երիցական (ամերիկեան) եկեղեցւոյ, մասնակցելու Սան Հոգէ քաղաքի մէջ, այդ եկեղեցւոյ տարեկան համագումարին, գաղութս կը գտնուէր Իրաքի Հայոց Թեմի Առաջնորդ, Գերշ. Տ. Ալագ Արք. Ասատուրեան: Սրբազանը, իր կեցուցութեան ընթացքին կատարեց իր կոչումին վայել եկեղեցական պարտաւորութիւններ, պատարագելով եւ քարոզելով Արեւմտեան Թեմի եկեղեցիներէն ներս: Ան ունեցաւ նաեւ ազգային-հասարակական բովանդակութիւն պարունակող ելոյթներ, յատկապէս գաղութիս նախկին Իրաքահայ շրջանակներու ծիրէն ներս: Սրբազանը նաեւ հանդիպեցաւ տեղական հայ մամուլի ներկայացուցիչներուն հետ:



տոն, իբրեւ Հայց. Եկեղեցւոյ ներկայացուցիչ Անկլիքան եկեղեցւոյ պետին մօտ, եւ ապա Ամերիկայի մէջ «National Council of Churches»-ի եւ յատկապէս Presbyterian Երիցական եկեղեցւոյ համագումարներու մասնակից, ուր նաեւ պիտի ունենար խիստ շահեկան ելոյթ: Այս բոլոր հանդիպումներու ընթացքին, Սրբազանը արժանացած է յարգանքի եւ ունեցած է կարեւոր ելոյթներ եկեղեցական հարցերու շուրջ:

\*\*\*

Մեր գաղութէն ներս, Սրբազանը ունեցաւ մէկ հրապարակային ելոյթ իրաքահայերու հաւաքատեղիէն ներս, որու ընթացքին ինք զեկուցում տուաւ, ոչ միայն իր շրջապատը մասին, այլ Իրաքի եւ Իրաքահայ այժմու կացութեան մասին: Ան նաեւ բազմաթիւ հարցումներու եւ հետաքրքրութեանց պատասխանեց իրեն յատուկ հիւմորով, պերճախօսութեամբ եւ ծանօթութիւններով:

Իր այս ելոյթէն, եւ իրեն հետ մեր ունեցած մտերիմ հանդիպումի իբրեւ արդիւնք, ստորեւ կը ներկայացնենք հետեւեալ տեղեկութիւնները:

1. ԻՐԱՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ Հակառակ Իրաքի մէջ տիրող բազմաթիւ եւ բազմատեսակ նեղութիւններու եւ դժուարութեանց, Ալագ Սրբ. կը յայտնէ իր լաւատեսութիւնը Իրաքեան իր հայրենիքի մասին, եւ կը շեշտէ ներկայի դժուարութեանց ժամանակաւոր եւ

անցողիկ նկարագիրը: Ինք հաւատացողն է թէ ի վերջոյ Իրաք պիտի գտնէ իր ներքին խաղաղութիւնը, եւ պիտի յաջողի համերաշխութիւն եւ գործակցութիւն հաստատել երկիրը կազմող տարբեր խմբաւորումներու միջեւ: Ինք չի բաժնորոմանց յոռետեսութիւնը Իրաքի մասին, եւ համոզուած է որ Իրաքի ժողովուրդը գերազանցապէս դիտակից եւ հայրենասէր ժողովուրդ մըն է, ինչպէս նաեւ մշակույթով եւ տնտեսութեամբ հարուստ երկիր մը, որ արագօրէն պիտի գտնէ իր ներքին խաղաղութիւնը: Իբրեւ մէկը որ քաջածանօթ է Իրաքի ներքին կացութեան, մենք գնահատելի գտանք իր լաւատեսութիւնը, հակառակ ներկայի տուեալներու թելադրած մէկ տխուր պատկերին:

Ինչ կը վերաբերի քրիստոնեայ համայնքներու, Սրբազանը յայտնեց որ Իրաքի մէջ կան 14 քրիստոնեայ համայնքներ, միացեալ մարմնով մը օժտուած, որուն ընդհանուր քարտուղարն է ինք: Իսկ աւանդականօրէն, 1921էն առդին, Իրաքի գաղութը միշտ սիրալիր յարաբերութեան մէջ եղած է տեղական մարմիններու հետ:

2. ԻՐԱՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ՊԱՏԿԵՐԸ

Համայնքի ներկայ թիւը ժամանակին, իր լաւ օրերուն Իրաքի հայ համայնքը կը հաշուէր շուրջ 35 հազար թիւ մը, բազմաթիւ կառույցներով: Ներկայիս այդ թիւը իջած է 17 հազարի Իրաքեան պատերազմի եւ անոր պատճառած տեղաշարժերու եւ արտագաղթի: Ասոնց իբրեւ արդիւնք տեղի ունեցած են թէ ներքին եւ թէ արտաքին տեղաշարժեր- ներքին՝ Իրաքեան տարբեր շրջաններէն ներս, օրինակի համար Պաղատատէն դէպի Հիւսիսային շրջաններ, ուր հաստատուած են նոր համայնքներ, իսկ արտաքին՝ Իրաքէն դէպի Յորդանան, Սուրիա, Ամերիկա, Հայաստան, Եւրոպա, մինչեւ իսկ Աւստրալիա եւ Նիւ Զելանտա: Յստակ թուական տուեալներ գոյութիւն չունին, սակայն համայնքին թիւը շուրջ կիսով պակասած է:

բ. Եկեղեցական-Ազգային-Մշակութային

Հակառակ այս թուական նուազումին, եւ ի գին լուրջ գոհողութեանց, որոնց մէջ նշմարելի է Սրբազանին առաջնորդող դերի կարեւորութիւնը, Ալագ Սրբազան կը հաստատէ թէ Պաղատատի մէջ Առաջնորդարանը երբեք չէ փա-

կած իր դռները: Մայր եկեղեցին շուրջ մէկ ու կէս տարի փակ մնալէ ետք, այժմ կը գործէ: Առաջնորդը անձամբ կը կատարէ հովիւի պարտականութիւնները: Միեւնոյն ատեն, գաղութը ունի 11 եկեղեցիներ, իսկ Սրբազանը ձեռնադրած է 15 կեղեցիներ: Պաղատատի մէջ 4 եկեղեցիներ կան, ինչպէս նաեւ նոր եկեղեցիներ կառուցուած են նոր հաստատուած շրջաններու մէջ, ինչպիսին է ՏՏՈՔի նոր եկեղեցին: Սրբազանը կարելի եղածին չափ, եւ պարբերաբար կ'այցելէ հեռավոր նոր շրջաններ, ուր կը գտնուին հայ համայնքներ - Զախօ, Քէրքուք, Էրպիլ, Պասրա, ՏՏՈՔ, Հավրէյ եւ ուրիշ վայրեր: ՏՏՈՔը եւ Հարվորը նոր համայնքներ են Իրաքի մէջ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2004 թուականին, Հոկտեմբեր 15-ին, Սրբազանը հպարտութեամբ կը վկայէր թէ վերաբացումը կատարած է, կէսօրուայ ժամը ճիշտ 12:20-ին ազգային Թարգմանչաց-Սվաճեան վարժարանին որ այժմ ունի շուրջ 200 հասնող աշակերտ: Դպրոցը ներկայիս ստացած է միջնակարգ աստիճան, լաւ ուսուցչական կազմով եւ ծախսերը ապահովուած են Առաջնորդարանի կողմէ:

ԱԶԳԱՅԻՆ

Պաղատատի մէջ ներկայիս կը գործեն հինգ ազգային-հասարակական կազմակերպութիւններ, ոմանք մարզական մասնաճիւղով: Կայ նաեւ հայ Տիկնանց Միութիւնը: Գոյութիւն ունի նաեւ ծերանոց մը, եւ շուրջ 300 կարօտեալ ընտանիքներ: Ծերանոցը կը գործէ Առաջնորդարանի խնամակալութեան տակ: Այս բոլոր հաստատութիւնները - դպրոց, եկեղեցի, միութիւններ, իրենց նիւթական ծախսերուն մէկ մասը կը բոյանայ ամերիկեան փիերու մէջ ապրող նախկին սաներէ, ինչպէս նաեւ Լոս Անճելըսի մէջ գործող Իրաքահայերու եւ այլ կազմակերպութիւններէ: Այս բոլորին հասցէին Սրբազանը կը յայտնէ իր գնահատանքն ու շնորհակալութիւնները, եւ կոչ կ'ընէ սփիւռքի հայութեան շարունակելու իրենց նպաստը Իրաքի հայ համայնքին:

ԱՐՏԱԳԱՂԹ

Հասկնալի եւ տխուր երեւոյթ մըն է այս, Իրաքի ներկայ կացութեան մէջ: Շատ մը հայ ընտանիք-

Մար. ք էջ 17

1975-2008 33th ANNIVERSARY Life, Health, Group Health Disability, Long Term Care NEW YORK LIFE


ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է ԵՐԻՔԵՐ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՂ ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՈ ՄԱՐՈՆԵԱՆ 818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205 E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



# ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՆ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՈՒԻԼԻԵՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

Հովանավորութեամբ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի եւ կազմակերպութեամբ նորակազմ Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան, Կիրակի, Յուլիս 13, 2008 կ.ե. ժամը 5:00էն սկսեալ, տեղի ունեցաւ վերոյիշեալ հանդիսութիւնը, նուիրուած աշխարհահռչակ մեծանուն գրող, Ուիլիեմ Սարոյեանի 100-ամեակին, Հայց. եկեղեցւոյ «Գալաթեան» սրահին մէջ, ի ներկայութեան բազմաճարիւր գրողներու, գրասէրներու եւ հայ գրականութեամբ հետաքրքրի հասարակութեան մը:



Լաւ ծրագրուած եւ ճոխ բովանդակութեամբ յատկանշուած յայտագիր մըն է որ ներկայացուցաւ, մեծ գրողին յիշատակին եւ վաստակին արժանի: Արդարեւ, այս տարին կը հանդիսանայ Փրեզնոս ծնած, անգլիագիր Սարոյեանի ծննդեան 100-ամեակը, թուական մը որ հանդիսաւոր կերպով պիտի նշուի ոչ միայն հայ ժողովուրդի – Միլիոնք եւ Հայաստան, այլ ամերիկեան գրական շրջանակներու կողմէ, համայն աշխարհին անգամ մը եւս նկարագրելու որ թէեւ անգլերէն էր իր գործածած լեզուն, սակայն Սարոյեան իր իսկ խոստովանութեամբ, ինքզինք հայ գրող կը նկատէր: Արդարեւ, Սարոյեան հայ մշակոյթը կը նկատէր իր գրական ներշնչումի աղբիւր, եւ կ'ըսէր.

«Հակառակ որ ես անգլերէն կը գրեմ, եւ ինքզինքս կը նկատեմ ամերիկացի, սակայն ես հայ գրող մըն եմ: Անգլերէն բառեր կը գործածեմ եւ կը գրեմ ամերիկեան երեւոյթներու մասին, սակայն այն ոգին որ գիւս կը մղէ գրելու հայկական է»: Սարոյեան կը սիրէր Ամերիկան, սակայն չէր մոռնար Հայաստանը:

\*\*\*

Չեռնարկին յայտագիրը պիտի սկսէր «Մասիս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր, գրող եւ Ս. Սահակ Պարթեւ եւ Ս. Մեսրոպ Մաշտոց» ի շքանշանակիր՝ Տօթթ. Արշակ Գազանճեան, որուն բացման խօսքը պիտի ունենար երկու

բաժիններ: Առաջին բաժնով ինք պիտի անդրադառնար Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան, որոշ մանրամասնութիւններ տարով անոր կազմութեան, ինքնահաստատման եւ Ամերիկայէն դուրս, անոր ունեցած եւ ունենալիք կազմակերպչական դրութեան մասին, իբրեւ հիւսիսային Ամերիկայի, Գանատայի, Լատին Ամերիկայի գրական շրջանակներու հետ կամուրջ հաստատող միաւոր մը: Ներկաները հետաքրքրութեամբ ունկնդրեցին իր զեկոյցը գրողներու այս միութեան մասին, որ կու գար կարեւոր բաց մը գոցելու մեր գրականութեան շուրջ գոյութիւն ունեցող եւ աճող անտարբերութեան մթնոլորտէն ներս: Եթէ կարենայ այս նորակազմ գրողներու Միութիւնը թափանցել երիտասարդ սերունդի ազգային գիտակցութեան ներս, հետաքրքրութիւն ստեղծելով մեր անգլագրական մշակոյթի նկատմամբ, արդէն մեծ ծառայութիւն մը մատուցած կ'ըլլայ:

Յարգելի տօթթորին բացման խօսքին երկրորդ բաժինը կը վերաբերէր Սարոյեանի կենսագրութեան որոշ մանրամասնութեանց, ինչպէս նաեւ անոր մշակած գրականութեան ընդհանուր գիծերուն:

Շաբ.ք էջ 19

## ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ 10-ԱՄԵԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԻ



Նոր Սերունդ Մշակութային Միութեան շրջանակը կը պատրաստուի դարձեալ նշելու Հայաստանի անկախութեան տարեդարձը, Կիրակի, Սեպտեմբեր, 21, 2008ին Կլէնտէյլի վերտուկօ Փարքին մէջ տեղի ունենալիք Փառատօնով:

1998-ին սկսած այս աւանդութիւնը կը բոլորէ իր տասնամեակը ու տարուէ տարի կը ստանայ յաւելեալ փայլք ու ժողովրդականութիւն: Այս տարի եւս բազմաճազար ներկաներ պիտի ապրին հայ մշակոյթի, երգի ու պարի, արուեստի եւ համադամ ճաշերով յազեցուած օր մը: Գեղարուեստական յայտագրով ելոյթներ պիտի ունենան սիրուած արուեստագէտներ եւ պարախումբեր: Պիտի ցուցադրուին հայկական մշակոյթի արուեստի գործեր, գիրքեր, ձայնասկաւառակներ եւ այլն: Երեխաներ ու պատանիներ առիթը պիտի ունենան իրենց ճարտարութիւնը ի գործ դնել, մանակցելով իրենց յատուկ խաղերու եւ մրցումներու ու շահելու նուէրներ:

Միացէք մեզի նշելու այս յոյժ կարեւոր տօնը եւ վայելելու յիշատակելի օր մը: Մուտքը ազատ է բոլորի համար:

Յաւելեալ տեղեկութիւններու համար, ինչպէս նաեւ կրպակներ ապահովելու համար կարելի է հեռաձայնել (818) 391-7938 թիւին:

## ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐԸ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՆ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՏՈՒՆԸ

Մոսկուայի Novosty լրատու գործակալութիւնը հաղորդում է. Հայ փոքրիկներին՝ ծնողազուրկ եւ անապահով երեխաներին օգնելու ցանկութիւնը ամերիկահայերի մօտմիշտ եղել է: Այն յատկապէս ակտիւացաւ 1988-ից՝ Հայաստանը ցնցող երկրաշարժից յետոյ:

Ութ տարի առաջ Լոս-Անջելեսում լոյս տեսնող «Քաջ Նազար» երգիծական հանդէսի խմբագիր Յովհաննէս Բալայեանը ստեղծեց ծնողազուրկ եւ անապահով երեխաների Սուրբ Ծննդի հիմնադրամ, որը լայն արձագանգ գտաւ ամերիկահայերի շրջանում:

Հիմնադրամի օգնութեամբ Հայաստանի բոլոր մանկատներում, գոհուած ազատամարտիկների եւ անապահով մարտիկների համար արդէն 8-րդ տարին է ինչ կազմակերպում են Ամանորի շքեղ հանդէսներ, բաժանում նուէրներ, նիւթական օգնութիւն է ցոյց տրուում:

Այս տարի Հիմնադրամը մանկատներին ուղարկում է նաեւ բժշկական գործիքներ, դեղորայք, ինչպէս նաեւ սկսել է իրարբերող մասնագիտացուած մանկատան շէնքի մի շարք սենեակների եւ սանհանգոյցների վերանորոգումը: Եռալարկ այդ շէնքի վերանորոգման աշխատանքները բուռն ընթացքի մէջ են: Աւարտուած է երրորդ յարկի խմբասենեակի հիմնական նորոգումը, շինարարական աշխատանքները ընթացում են առաջին եւ երկրորդ յարկի խմբասենեակներում: Աշխատանքները կ'աւարտուեն Օգոստոս ամսին:

Ինչպէս նշեց մանկատան տնօրէն՝ բժիշկ Հ. Բալասանեանը, սա կարեւոր եւ հսկայական օգնութիւն է մանկատանը:

- Մենք պատրաստուում ենք մանկատան պատին ամրացնել պատուոյ տախտակ, շնորհակալութիւն յայտնելով եւ Յովհաննէս Բալայեանին եւ լոսանջելեսահայ բոլոր աջակիցներին: Յաւօք, նրանց բոլորի անունները չենք կարող նշել, սակայն երախտագիտութեան այդ բառերը նրանց բոլորին է հասցէագրուած, - ասաց մանկատան տնօրէնը:

## Գրաւուած Թուական Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ Սեպտեմբեր 21, 2008

SUNDAY	MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY	SATURDAY
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Armenian Independence Day FESTIVAL

To reserve your booth please call Nor Serount Cultural Association  
 Չեր կրպակները ապահովելու համար  
 Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան  
 (818) 391-7938

# ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

## «ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ» ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՄՆԱՐԿԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ

### ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

Բազմամեայ տնօրէն, ուսուցիչ ու հասարակական գործիչ Երուանդ Պապայեանի անունը կրող Հիմնարկին մանկավարժները վերջերս կազմակերպեցին երեք օգտաշատ աշխատանիստեր, Հ.Բ.Ը.Մ.ի Քալիֆորնիոյ գոյգ վարժարաններու մանկավարժական անձնակազմին համար, ներկայութեամբ աւելի քան հարիւր ուսուցիչ-ուսուցչուհիներու:

Առաջին երկու աշխատանիստերուն կը մասնակցէին վարժարաններու հայ եւ ոչ-հայ ուսուցիչ-

կարեւորութիւնը, որուն համար պէտք է քայլ պահենք նոր մեթոտներու հետ, թափ տանք եւ նեցուկ կանգնինք հայերէնի ուսուցիչներուն, որոնք հսկայ ջանքեր կը թափեն այդ ուղղութեամբ: Ըստ անոր, հայերէնի ուսուցման ծրագիրը հիմնուած պէտք է ըլլայ յստակ ուղղութեամբ իրեն ունեցող չափանիշներու վրայ, որուն մէջ հայերէնի ուսուցիչները մեծ ներդրում պէտք է ունենան: Հիմնարկի ջանքերով, ըսաւ դոկտ. Գարայեան, ուսուցիչները պիտի օժտուին նոր գիրքերով ու լրացուցիչ աղբիւրներով: Ան շեշտեց, թէ յստակ



Աշխատանիստերուն մասնակցած մանկավարժները

ները, որոնք հրաւիրեալ մասնագէտ դոկտ. Ալպերթ ձոնգէն լսեցին, թէ ի՞նչ ակնկալութիւններ պէտք է ունենան դաստիարակ ուսուցիչները իրենց աշակերտներէն:

Երրորդ աշխատանիստը տարածուած էր երկու օրերու վրայ, Յունիս 23-24-ին, Հ.Բ.Ը.Մ.ի ուսումնական ֆասատինայի վարժարանին մէջ: Այս մէկը նախորդներէն կը գատորոշուէր իր գոտ հայկական բնոյթով:

Աշխատանիստի գլխաւոր վարիչն էր երկար տարիներու մանկավարժ դոկտ. Պերճուհի Քուքէեան, որուն կ'օժանդակէին դոկտ. Սիլվա Գարայեան (Քէլ Լուիզընըն համալսարանի փորձէտոր), դոկտ. Էլլի Անդրէասեան (Հ.Բ.Ը.Մ. «Մանուկեան-Տեմիրճեան» վարժարանի փոխ-տնօրինուհի) եւ դոկտ. Մարի Տաքսեան:

Նախ քան աշխատանիստի գործնական մասին անցնելը, դոկտ. Գարայեան ներկայացուց Հիմնարկին ու աշխատանիստին նպատակները: Ան շեշտեց հայերէն կրթութեան եւ հայերէնի ուսուցման խիստ

ուշադրութեան առարկայ պէտք է դառնայ հայերէնի մէջ յառաջողէմ աշակերտներու խումբը:

Երկօրեայ աշխատանիստին եւ անկէ ետք շարունակուելիք խորհրդակցութիւններու ու առանձին խումբերով տարուելիք նիստերուն մէջ շեշտուեցաւ ուղղահայեաց շարունակականութեան սկզբունքը՝ մանկապարտէզէն նախակրթարան ու երկրորդական բաժին:

Աշխատանիստի ընթացքին ուսումնասիրուեցան, ի մի բերուեցան եւ ներկայացուեցան մէկ կողմէն այն աշխատանքներն ու ռազմավարութիւնները, որոնք ուսուցիչներու կողմէն մաս կը կազմեն, միւս կողմէն ուսումնասիրուեցան, քննարկուեցան ու ներկայացուեցան այն ակնկալութիւնները, որոնք աշակերտին պարտաւորութեանց շրջագիծին մէջ կը մտնեն:

Երկօրեայ քննարկումներու ընթացքին նկատի առնուեցան բաւազարի հարստացումը, բանաւոր ու գրաւոր արտայայտութեան ճիշտացումը, հայկական ու համաշխարհային գրականութեան կու-

## ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՄՆԱՐԿ ԳԱԿԻՐԾ ԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Վաստակաշատ դաստիարակ եւ երկարամեայ տնօրէն Երուանդ Պապայեանի անունը կրող Մանկավարժական Հիմնարկի առաքելութիւնն է հաւաքական ուժերով եւ գիտակցութեամբ զարկ տալ հայապահպանման եւ ազգակերտումի գործընթացին՝ հայ նորահաս սերունդներուն ջանքերով որակաւոր դաստիարակութիւն՝ նորարար, ամբողջական եւ արդիական միջոցառումներով:

Իր տեսակին մէջ եզակի այս Հիմնարկը պիտի գայ առաւել եւս զարկ տալու հայ նոր սերունդի որակաւոր դաստիարակութեան: Կը հաւատանք թէ՛ նոր սերունդին հայերէն դաստիարակութիւնը պէտք է ըլլայ արդիական եւ ամբողջական, քայլ պահելով շրջապատի յառաջդիմութիւններուն հետ:

Երուանդ Պապայեան Մանկավարժական Հիմնարկի գործընթացը հաստատուած է այն համոզումին վրայ թէ՛ հայապահպանումը եւ ազգակերտումը կարելի է յաջողցնել միայն հաւաքական ուժերով, որովհետեւ հայ նոր սերունդին դաստիարակութիւնը հաւաքական պատասխանատուութիւն է: Հայկական վարժարաններու եւ ուսուցիչներու կողքին պէտք է ապահովել սերտ գործակցութիւնը եկեղեցիին, մամուլին, հայագիտական ամպիոններուն, ինչպէս նաեւ այլ գործօններուն:

Մանկավարժական Հիմնարկը առիթներ պիտի ստեղծէ այս բոլոր միաւորներուն համագործակցութիւնը ապահովելու եւ անոնց ձայնը լսելի դարձնելու հայապահպանումի եւ ազգակերտումի աշխատանքներուն: Աւելին՝ Հիմնարկը գործնական միջոցառումներով հայ լեզուի, պատմութեան եւ մշակոյթի ուսուցումը պիտի ջանայ արդիականացնել յօգուտ հայերէն դաստիարակութեան որակի բարելաւման:

Այսօր, երբ Ամերիկայի մէջ կը գտնուինք նոր մարտահրաւէրներու դիմաց՝ պէտք է զինուիլ անոնց դէմ: Մենք որդեգրած ենք գործնական լաւատեսութիւն: Կը գիտակցինք մարտահրաւէրներու ծանրութեան, բայց կը հաւատանք նաեւ թէ կարելի է դիմագրաւել եւ յաղթահարել զանոնք, հաստատ կամքով, հաւաքական եւ ծրագրուած աշխատանքով:

Հայերէն լեզուի եւ պատմութեան ուսուցիչներու թիւը հետզհետէ կը նօսրանայ: Այս երեւոյթին առջեւ պէտք է ըլլալ արթուն եւ հեռատես:

• Անհրաժեշտ է հնարամիտ միջոցներով նոր թեկնածուներ ներգրաւել եւ պատրաստել զանոնք:

• Անհրաժեշտ է վեր առնել ներկայ հայ ուսուցիչներուն հաւաքական փորձառութիւնը եւ հարուստ վաստակը:

• Անհրաժեշտ է նեցուկ կանգնել հայ ուսուցիչներուն՝ զանոնք զինելով ուսուցանելու արդի մօտեցումներով ինչպէս նաեւ անոնց հայթայթելով նորանոր աղբիւրներ՝ ճիշտացնելու համար իրենց մտապաշարը:

• Անհրաժեշտ է նաեւ հայ լեզուի, պատմութեան եւ մշակոյթի ուսուցումը աւելի գրաւիչ, արդիական, գործնական եւ արդիւնաւոր դարձնել: Հիմնարկը արդիական մշակոյթի ուսուցումը պիտի ճիշտացնէ մանկավարժական արդիական եւ նորագոյն մեթոտներով եւ գործնական մօտեցումներով:

• Անհրաժեշտ է ապահովել, նաեւ գործակցութիւնն ու մասնակցութիւնը ոչ աւանդական ուսուցիչներու՝ օգտուելու համար անոնց հնարամիտ եւ նորարար ուսուցանելու փորձառութեան:

Մանկավարժական Հիմնարկը յաւակնութիւնը չունի անմիջական եւ արագ յաճանարարութիւններ կատարելու: Մեր գլխաւոր նպատակն է պարզապէս երկխօսութիւն ստեղծել զանազան միաւորներու միջեւ: Միաւորներ եւ անհատներ, որոնք կ'որդեգրեն դրական կեցուածք եւ որոնք պատրաստ են իրենց գործօն մասնակցութիւնը բերելու Հիմնարկի աշխատանքներուն, հետեւողական ճիգերով առանց նահանջի եւ ընկրկելու:

տակած արժէքներու գուզադրումը, ճիշտացումը եւ փոխկապակցութիւնը, ժամանակակից լսատեսողական սարքաւորումներու հաւասարակշռուած օգտագործումը, համացանցին օգտուելով աշակերտին գիտելիքները ճիշտացնելու եւ ամ-

րապնդելու ուղիները, դասանիւթերու ընտրութիւնը, աշակերտական գրաւոր եւ բանաւոր արտայայտութիւններու հրատարակութիւնը, եւ այլն:

Շաք.ք էջ 17

THE QUALITY AND SAFE CHOICE...



**AGBU PASADENA HIGH SCHOOL**

2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104  
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

**2008-2009 SCHOOL YEAR  
OPEN ENROLLMENT  
GRADES: 9-12**

COLLEGE PREPARATORY ACADEMIC PROGRAM  
HONORS & AP LEVEL INSTRUCTION

FOR MORE INFORMATION, PLEASE CALL 626-794-0363



# Massis Weekly

Volume 28, No. 27

Saturday, JULY 26, 2008

## Sarkisian Refuses Any Dialogue With Opposition Popular Movement To Hold Rally On August 1 Despite Ban By The Regime

YEREVAN -- Serzh Sarkisian on Monday all but ruled out the possibility of starting a dialogue with his political opponents led by Levon Ter-Petrosian and said his governing coalition is broad-based enough to successfully meet challenges facing Armenia.

Sarkisian also downplayed criticism of his overtures to Turkey which was voiced recently by his predecessor Robert Kocharian.

The United States, the European Union and other international bodies have repeatedly called for a dialogue between the Armenian authorities and the Ter-Petrosian-led opposition since last February's disputed presidential election and its bloody aftermath.

"When I speak of a dialogue, I mean a dialogue with the people," Sarkisian clarified at his first news conference since his April 9 inauguration. "I mean a dialogue within the public, I mean a dialogue between the state and the public, rather than a dialogue between the president of the republic and some individual."

"What should our dialogue be about?" he said, referring to the opposition. "If those people's demand and goal is new elections, what should we talk about? About when to hold those elections?"

"I am already tired of elections. We have held more than one election within a short period, and I think the next national elections will be in four years from now."

Sarkisian claimed that he has no authority to free individuals considered as political prisoners by the opposition and human rights groups. "I'm not used to working like that," he said. "It's a very bad temptation because freeing dozens of persons with one phone call would also mean being able to jail dozens of people with one phone call."

An aide to Ter-Petrosian scoffed at this argument, insisting that Sarkisian tightly controls Armenia's security apparatus and courts. "Does that mean they can jail people with one phone call but when it comes to freeing them they are powerless?" said Levon Zurabian.

Zurabian also portrayed Sarkisian's remarks as a further indication that the authorities were never serious about negotiating with the opposition. "This is primitive demagoguery with which Serzh Sarkisian publicly acknowledged that he has no plans for a dialogue with the opposition," he told RFE/RL.

The Ter-Petrosian camp has given Sarkisian until August 1 to release all "political prisoners" and meet other opposition demands or face the possibility of a renewed opposition campaign of non-stop street protests. Sarkisian's remarks leave the Ter-Petrosian-led opposition with no choice but to demand his resignation at the

Continued on page 4

## Armenia, Turkey 'In Secret Talks'

Armenia and Turkey have held confidential negotiations to discuss a new opening for the normalization of their strained relations, a leading Turkish newspaper reported on Friday.

A senior U.S. official, meanwhile, expressed hope that Turkish President Abdullah Gul will accept his Armenian counterpart Serzh Sarkisian's invitation to arrive in Yerevan on September 6 for a World Cup qualifier match between the two countries' national football teams.

The mass-circulation daily "Hurriyet" said senior diplomats from the two countries met in the Swiss capital Berne on July 8 and held talks for several days. It quoted the unnamed head of the Turkish delegation in the talks as saying that "the meeting took place in a positive atmosphere." No details were reported.

Turkish Foreign Minister Ali Babacan did not deny the report, saying the two countries have contacts "from time to time" and stressing that Ankara favours dialogue with its north-eastern neighbour. "We have contacts with Armenian colleagues from time to time," Babacan told reporters, according to AFP news agency. "It is important to discuss how relations between the two countries can be normalised through dialogue."

The Armenian Foreign Ministry could not be reached for comment on Friday.



Turkish Foreign Minister Ali Babacan

According to "Hurriyet," the reported talks were made possible by Sarkisian's recent overtures to Ankara, including the invitation extended to Gul. In an article published by "The Wall Street Journal" on July 9, Sarkisian said Armenia is ready to engage in "a new phase of dialogue with the government and people of Turkey."

Turkish Foreign Minister Ali Babacan told the private NTV television on Wednesday that Gul has not yet decided whether to accept the extraordinary invitation. "Such a participation would depend on the developments ahead of the match," he said.

Babacan also said that the onus is on the Armenian side to normalize Turkish-Armenian relations. "Armenia should decide: Should the problems continue or should we open a new chapter in relations?" he said, according to "The Turkish Daily News."

## House Panel Blocks Sharp Cut In U.S. Aid To Armenia

A key subcommittee of the U.S. House of Representatives rejected an almost 60 percent cut in regular U.S. economic assistance to Armenia which is sought by the administration of President George W. Bush.

Յայտագրի աւարտին, չուզիչ բաժին մը ունէր գնահատականներով, ծաղկեփունջերով յագեցած որու ընթացքին Արա Մելքոնեան եւ իր օգնականները վարձատրուեցան իրենց աշխատանքի եւ ձեռք ձգած յաջողութեան համար:

Մեր կողմէ, շնորհաւորելով Արա պարային սթուտիոն, այն ակնկալութիւնը ունինք որ սոյն հաստատութիւնը տակաւին երկար տարիներ պիտի ծառայէ հայ համայնքին, երիտասարդ սերունդին ջամբելով երաժշտութեան եւ պարային արուեստի ազնուացնող տուեալները:

Վարձքերնիդ կատար: Զ.Ս.

ԳԻՏԵՑԷՔ »ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳ«-Ը  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՉ  
PACC (Pasadena Access Community Corp.)  
channel 56-ի եթերով՝ charter cable-ի վրայ,  
ամէն Երեքշաբթի 3:30 am եւ 3:30 p.m.  
Յուլիս 29-էն սկսեալ

# ՈՐ ՏԱՅ ԱՂՔԱՏԻՆ, ՏԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ

## ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ ԵՐԱԺՇՏԱԳԷՏ

Առաջին հերթին, այսու, կ'ուզեմ հրապարակաւ անհուն շնորհակալութիւններս յայտնել սոցն թերթին յարգելի ու ազնիւ խմբագրութեան, որ ցարդ սիրով հրատարակած է բոլոր խնդրագրերս, լաւ գիտնալով հայրենի կարիքաւոր երաժիշտներուն օգնելու ծրագրիս ներկայացուցած արժէքն ու կարեւորութիւնը:

Համաշխարհային Բ. պատերազմին, երբ Գերման բանակները հարակալին Եգիպտոս մտան ու ամէն գիշեր Աղբքանալի քաղաքը ուռմբերու տակ պահեցին, կը յիշեմ, հազիւ ութ տարեկան տղէկ մըն էի, հայրս նման այլ ընտանիքներու, մեզ պատերազմի թատերաբեմէն հեռացնելու մտքով տարաւ Գահիրէ, ուր ապաստանեցանք Պէն էլ Սուրէնի Ս. Աստուծածին եկեղեցւոյ համալիրին մէջ, որ այդ օրերուն վերածուած էր գաղթավայրի: Տեղացիները մեզ կը կոչէին գաղթականներ:

Բայց ինչո՞ւ կ'ըսեմ այս: Պատերազմի տիտուր օրերը վերջիւ չելու համար չէ որ կը գրեմ այս, այլ՝ ընթերցողին պատմելու համար հետեւեալ դէպքը կամ պատկերը, զոր այնքան խոր կերպով քանդակուած էր պատանի մտքիս վրայ:

Եկեղեցւոյ համար որպէս եկամտուտի աղբիւր իսկ հաւատացեալներու համար ալ որպէս բարեպաշտական զգացումներու արտայայտութեան առիթ, Կիրակի օրերը Տիկնանց Միութեան հսկողութեամբ, եկեղեցւոյ դրան առջեւ պղնձեայ մեծ պնակներով մի քանի սեղաններ դրուած կ'ըլլային:

Չեմ գիտեր որո՞ւ տնօրինութեամբ ինձի պարտականութիւն տրուեր էր Տիկնաց Միութեան անդամուհիներուն ազնիւ ժպիտներուն տակ, սեղաններէն մէկուն առջեւ կեցած, բարձրաձայն կրկնել «Շէն մնաք, շէն ու պայծառ մնաք, աղքատաց պնակն է անտես մի առնէք»: Երկար նախադասութիւնը:

Թէեւ յոգնեցուցիչ էր ութը տարեկան փոքրիկի մը համար երկար ժամանակ ուղիղ, առանց կտրտուելու կենալ եւ կրկնել ու կրկնել այդ յանկերգը, վարձատրութեան

հեռանկարը սակայն, գրաւիչ ու առինքնող ըլլալով, գայն ունենալու ակնկալութիւնս որոշ չափով կը մեղմացնէր պարտականութեանս պատճառած դժուարութիւնը: Վարձատրութիւնն էր, կէս արապի հացի մէջ փիլաւով խաշած հաւի միսի կտոր մը, որ շաբթուան լաւագոյն ճաշս կ'ըլլար:

Գրելուս պատճառը այս ալ չէ: Բայց, եթէ այս ըսածներս չպատահին եւ կամ չապրէի գանոնք, կեանքիս մէջ խոր տպաւորութիւն թողած խօսքէ մը, որ իր պարզութեամբն ու միաժամանակ Աւետարանական ճշմարտութեան զօրեղ ազդեցութեամբը յետագայ տարիներուն կեանքիս ուղեցոյց էր հանդիսացած, գրկուած պիտի ըլլայ:

Այդ պարզ, սակայն, ամբողջ երկրագունդին մեծութիւնը ունեցող խօսքը, առաջին սեղանին վրայ, մեծ պնակին քովը գետեղուած ցուցատխտակն էր այս պէս գրուած. «Որ տայ աղքատին, տայ Աստուծոյ»: Այսինքն՝ Այն որ աղքատին կու տայ, Աստուծոյ տուած կ'ըլլայ:

Ահա, այս ճշմարիտ ու ազնիւ խօսքը այսօր կեանքի արտայայտութեան վերածելու համար յիշեցի, քանի որ, ինչպէս գիտէք իմ գրութիւններէս, ձեր ուշադրութեան կը յանձնեմ հայրենի մեր կարիքաւոր երաժիշտ-երաժշտագէտներու օգնելու ծրագիրս:

Սեպտեմբեր 9-ին, տիկնոջս հետ կրկին հայրենիք պիտի երթանք ու իրագործենք օգնութեան ծրագիրը: Շնորհիւ, անցեալ տարուան ձեր սրտաբուխ նուէրներուն օգնութեան հասաք 16 տարեկան երաժշտանոցի աշակերտէն մինչեւ 96 տարեկան երաժշտագիտուհիին, այսպէս.

Ձեր նուէրներով օգնեցիք մախարո Յարութիւն Թօփիկեանի «Երեւանի Կամերային Երգչախումբ»ին, իրենց ոսկեայ տարիները ապրող երեք տարիքաւոր թոշակաւ երաժշտագիտուհիներու, «Կոմիտասի Անուան Պետական Երաժշտանոց»ի հրատարակչատան, որ հայ երաժշտական մշակոյթին պահպանման եւ զարգացման բազմակողմ կը նկատեմ, աշխատողներուն, Կոմիտաս երաժշտանոցը յաճախող երկու ծնողագուրկ աշակերտուհիներու,

որոնցմէ մին կ'ապրի մեծ մօրը հետ, իսկ միւսը որ երկու քոյր եւ եղբայր մըն են, եղբայրը անցեալ տարի զինուորական ծառայութեան կանչուելով երկու քոյրերը կ'ապրին միասին, իրենց բախտին ձգուած: Չմոռնանք որ ատոնք կեանքին նոր բացուող, նոր ծաղկող տաղանդաւոր ու շնորհալի պարման ուհիներ են, շուշաններն են: «Աշուղ Զիվանու երաժշտանոց»ի ժողովրդական գործիքներու բաժինը ընդունուած տաղանդաւոր աշակերտներ, չունենալով երթեկեկութեան bus-ի դրամ, չէին կրնար դպրոց երթալ. շնորհիւ ձեր նուիրատուութեան այսպիսի չորս աշակերտներու մէկ տարուան երթեկեկութեան (մաշրուտնիքի) ծախսերը հոգացուեցան:

Ձեր օգնութիւնը հասաւ նաեւ միջազգային հուշակի հասած տարեց կոմպոզիտորուհի մը, երիտասարդ դաշնակարուհի-կոմպոզիտորուհի մօր մը, երկու տարեկան մանչուկի մը հօր եւ մօր (երկուքը կատարելագործուած երգիչներ), այլ երկու երգիչներու ու այլոց:

Բորիքն ստորագրութիւն առած եմ օրուան թուականներով ու իրենց ատացած գումարներուն նշումովը: Վերադարձիս, շնորհակալական յատուկ նամակներով ուղարկած եմ գանոնք իրենց նուիրատուներուն:

Այս է իմ գործելուս կերպը: Սէնթը սէնթին պէտք է հաշիւ ներկայացնեմ նուիրատուներուն խղճիս անդորրութեան համար:

Չմոռնամ ըսելու որ, խօսքս արհեստավարժ (professional) երաժիշտներու մասին է, որոնց սեղանին վրայ հաց կը դրուի, երբ գործ գտնեն հայրենի երաժշտական այնքան սահմանափակ ապարհզգէններս:

Այսու, հրապարակաւ ես կու գամ խորին շնորհակալութիւններս յայտնելու բարեսիրտ ու ազնիւ նուիրատուներուդ եւ համեստաբար խնդրելու նաեւ բոլորէդ, որ ձեր ալ նուիրատուութիւններով թեթեցնենք մեր կարիքաւոր երաժիշտներու հոգիներուն ու ուսերուն վրայ ճշող կեանքի դժբախտ իրականութեան ծանրութիւնը: Ի վերջոյ այսպիսիները մեր ազգին պարծանքն են եւ մեր ազգային ինքնութիւնը շեշտողներն ու պահողներն են:

Կը վերջացնեմ այս խնդրագիրս, գրութեանս սկիզբը այնքան զօրեղ կերպով շեշտած ու յիշած Աւետարանական ճշմարտութիւն մը բնութագրող ոսկեայ խօսքովը.

«Որ տայ աղքատին, տայ Աստուծոյ»:

Ձեր սրտաբուխ նուէրները կրնաք ղրկել իմ անունիս ու հասցէիս, իսկ աւելի տեղեկութեանց համար կարող էք հեռաձայնել իմ հեռախօսիս: Կանխայայտ շնորհակալութիւններս եւ լաւագոյն մաղթանքներս բոլորիդ:

Krikor Pidedjian  
72 Pilgrim Avenue  
Yonkers, NY 10710  
Tel. (914) 793-0913



## Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company

Call now and let me help take the worry out of your health care!

**HARUT DER-TAVITIAN**  
Authorized Independent Agent  
1807 W GLENOAKS BLVD. #202  
GLENDALE, CA 91201  
(818) 502-3233  
HARUT@EXCELHYE.COM  
WWW.EXCELHYE.COM  
CA Insurance  
License #0B28270



Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

St Peter's Armenian Church • 632 W. Stocker, Glendale, CA 91202

STAY AFTER CHURCH FOR A FREE SCREENING OF

# Husher (Memories)

Directed by: Avedis Ohanian

Winner of the Best International Political Documentary 2008 at New York International Independent Film and Video Festival 2008

Sunday, July 27th • 1:00 pm

Husher (Memories) Talks about the genocide of the Armenian population of the Ottoman Empire in the early 20th century. In reality it is not late, as the wish for vengeance that torments most those few who have managed to survive during the great genocide tragedies. Perhaps it's the wish to find peace finally in self-destruction. What do the survivors of a genocide dream about? And, in particular, what do the Armenian survivors, those who claim find themselves to be the only survivors of an enormous family, of entire villages dream about? After having passed through terrible experiences and having gained the thousand deaths that Armin Wegner, the German official, showed in his photographs that testify to the reality of deportation. Dreaming that people know what had happened to them and participate in their pain. Dreaming that their voice is no longer lost, that everyone is aware of the fact that what happened to the Armenians. But for fifty years and more nobody assessed themselves about them and in this way all the survivors share grows old. Everywhere there is an Armenian Diaspora, have the voices of the old people began to be gathered. In this documentary, a number of exceptional testimonies of survivors who found refuge in Italy have been collected. Recorded just in time before the inexorable flow of time mutes their voices. It takes Armenians are in fact very few, just a few thousands, especially if compared to the hundreds of thousands of citizens of Armenian origin who live in France, or around a million, who live in the United States. But the voices of all the Armenian Diaspora complete the painful spectacle of the testimonies gathered through throughout the world.

This film is about 45 minutes.

[www.husher.org](http://www.husher.org)

**ՅՈՒՇԵՐ**

**ՊԱՏՄԱԿԱՆ**

**«ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»Ի ՇԱՐՔԻՑ**

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՒ. ԲՆՅ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ-ԲԱԼԱՅԵԱՆ**

**ԱՍԳԱՆԱԶ ՄՈՒՎԵԱՆ**

1924 թուին Երեւանում մենք՝ հայրենադարձներս, մեզ շատ ազատ եւ հանգիստ էինք գոյում: Ամէն կողմ հայեր էին, ամենուր հայերէն լեզուով էին խօսում: Բոլոր հիմնարկները հայեր էին, ազատ էլ ու մուտ էինք անում, եւ պաշտօնեաները մեր զանազան դիմումները եւ խնդրանքները կատարում էին սիրով: Շնորհիւ բանիմաց ղեկավարների, օրէջօր բարելաւում էր ժողովրդի առօրեայ կեանքը: Ամէն կողմ բացուել էին դպրոցները, եւ յամառ պայքար էր գնում անգրագիտութիւնը վերացնելու համար: Բազմաթիւ հայ երիտասարդներ, կանոնաւոր այցելում էին քաղաքացիների բնակարանները, տներում, մինչեւ իսկ բակերում, չափահաս անգրագէտ կանանց ու տղամարդկանց հետ հայերէն էին պարապում: Անգրագիտութեան վերացման գործում իր արժանի տեղն ունէր ժամանակի լուսաւորութեան նախարար եւ «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Աբգարազ Մուսիկեանը, որը մեծ սէր եւ համակրանք ունէր հասարակութեան մէջ: 1929 թուի վերջերին յանկարծամահ եղաւ այդ մեծ հայրենասէրը, որի յուղարկաւորութիւնը աննախընթաց էր ամբողջ երկրում: Ա. Մուսիկեանի դագաղը դրուած էր Կոստուրականի մեծ դահլիճում, շրջապատուած պատուոյ պահակներով:

Տասնեակ հազար երեւանցիներ եւ շրջաններից եկած բանուորներ ու զիւղացիներ, լուռ ու գլխահակ իրենց յարգանքի վերջին տուրքն էին տալիս մեծ հային եւ մեծ հայրենասէրին:

**ՌԻԿՈՎԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԵՐԵՒԱՆ**  
Ճմգրիտ թուականը չեմ չիշոււմ, թերեւս 1926-27 թուականին էր, որ Մոսկուայից Հայաստան ժամանեց Խ. Միլոթեան ղեկավարներից՝ Ռիկովը, որի ընդունելութիւնը բացառիկ էր եւ հանդիսաւոր: Հայկական բանակը, որն մնում էր Չանգու գետի ափին գտնուող Քանաքեռի գործանոցում, կարգ ու սարքով հերթականօրէն կանգնած էր Աբովեան պողոտայի երկու կողմերում: Ռիկովը հազնուած էր շատ պարզ եւ հասարակ, որի համեստ կեցուածքը խորը տպաւորութիւն էր թողնում:

Նա մի քանի օր Երեւանում մնալով այցելեց մի քանի գործարաններ, բանուորական եւ զանազան հաւաքավայրեր, եւ հետաքրքրուեց ժողովրդի կեանքով եւ երեւութապէս գոհ մեկնեց Հայաստանից:

**ԱՐԳԵԼԱՄ ԳՕՏԻ**

Արտասահմանից նոր էինք ժամանել հայրենիք, անծանօթ էինք տեղական պայմաններին եւ օրէնքներին: Ազատ ժամերին ընկերներով գնում էինք Երեւանի շուկան գնումներ կատարելու կամ զբօսնելու: Պաղտատ եղած ժամանակ, գնել էինք անվրակական գինուորական հագուստներ: Դրանք հագնում էինք նաեւ Երեւանում:

Անցնում էինք, չզիտեմ որ պողոտայի մայթով, երբ պահակ գինուորը «կանգ առ» ի հրաման տուեց: Բոլորս շփոթուեցինք, ինչ պիտի ասէր պահակ գինուորը:

Ընկերներ - ասաց նա - չզիտէ՞ք միթէ, քաղաքացիներին արգելուած է ուսաղիրներ կրել, պոկեցէք ձեր հագուստների ուսաղիրները: Մենք սիրով կատարեցինք նրա պատուէրը: Իսկ մի օր անցնում էին Թարխանովսկի պողոտայով: Ուզում էինք Կոնդ գնալ: Մայթով անցելիս երկյարկանի շէնքի դարպասից մէկը դուրս եկաւ ու մօտեցաւ ինձ, բարեկեց ու ասաց - Ընկեր այս մայթը որով անցնում էք իստիււ արգելուած է, նայէք այս շէնքին...:

Յայտնեցի որ արտասահմանից նոր եմ ժամանել: Նա աւելի մեղմացաւ ու հեռացաւ ներողամտութեամբ: Այդ շէնքը Չեկա-ի շէնքն էր:

**ԵՐԵՒԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ**

Երեւանը հնուց ի վեր ունէր վեց եկեղեցի: Պողոս-Պետրոս եւ Կաթողիկէ եկեղեցիները գտնուում էին Աբովեան պողոտայի վրայ: Ս. Լուսաւորիչը նորակառուց եւ ամենաշքեղ եկեղեցին Րաֆֆու եւ Բէչբուլեան փողոցների վրայ էր: Ս. Սարգիս առաջնորդարանիստ եկեղեցին կառուցուած էր Չանգու գետի ափին. իսկ Ս. Զօրավար եւ Ս. Յովհաննէս եկեղեցիները գտնուում էին Կոնդում: Այդ եկեղեցիները ունէին իրենց ծխատէր քահանաները, թուով 12 հոգի: Պողոս-Պետրոս եկեղեցում կային չորս քահանաներ՝ Յակոբ Ա. Քհնյ. Խաչվանք-

եան, Չաւէն Քհնյ. Գասպարեան, Մատթէոս Ա. Քհնյ. եւ Ղեւոնդ Քհնյ. Արամեան: Վերոյիշեալ քահանայ հայրերը, բոլորն էլ ճեմարանաւարտ, ուսեալ եւ կիրթ անձնաւորութիւններ էին եւ նուիրեալ հոգեւորականներ, որոնք իրենց կիրակնօրեայ քարոզներով, հոգեւոր մխիթարութիւն էին տալիս հաւատացեալներին: Չնայած կառավարութեան կողմից որեւէ ճնշում չէր բանեցուած եկեղեցիների, հոգեւորականների եւ հաւատացեալներին, սակայն հակակրօնական քարոզչութիւնը, որ այն օրերին մղուած էր Խորհրդային ամբողջ երկրում, պատճառ էր եղել, որ զգալիօրէն, երիտասարդութեան մի կարեւոր տոկոսը խուսափի եկեղեցի յաճախելուց: Երեւանի գերեզմանատանը կառուցուած էր մէկ մատուռ: Այդ մատրան մէջ տարեկան 5 մեռելոցին Ս. Պատարագ էր մատուցուած:

**ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶԲՕՍԱՎԱՅԻՐ**  
Երեւանի հիդրօկայանը կառուցուած էր Զորագէտում, Զանգուի ձախ ափին, որի բացումը կատարուեց ժողովրդական մեծ հանդիսութեամբ:

Այդ օրերին Հայաստանի ժողովուրդը ցնծութեան եւ խանդավառութեան բացառիկ պահեր անցկացրեց: Ամէնքի դէմքին գոհուական եւ հպարտութեան ժպիտ կար: Գետի ջուրը հոսում էր զահալիթօրէն, որի ուժգին թափը, ահաւոր ճռնչումով շարժում էր հիդրօկայանի մեքենաների անիւները, ու առատ լոյս մատակարարում էր ելեքտրական ճրագրներով: Կիրակի օրը հանգստեան օր էր: Բազմազգար ժողովուրդ խոնուում էր հիդրօկայանի շրջակայ ափները: Ամենուր լսում էին երգի, նուագի եւ ուրախութեան ձայները: Երջանիկ կեանքի քաղցրալուր օրեր էին: Ես որպէս նորեկի, փափաքում էի տեսնել Հայաստանի տեսարժան վայրերը: Այդ նպատակով, կնոջս եւ երեխաներիս հետ ամէն կիրակի գնում էինք քաղաքի շրջակայ գիւղերը եւ աւանները: Այցելեցինք Աշտարակի շրջանում գտնուող Օշական գիւղը, որտեղ ննջում էր հայոց մեծ Լուսաւորիչը՝ Մեսրոպ Մաշտոցը: Գնացինք Արզնի, Գեղարդ, ապա Աւար, որտեղ ապրում էին մեր ազգականները, եւ բազմաթիւ

վանեցի հայրենակիցներ: Գիշերները երբեմն գնում էինք շարժական կամ թատրոն, եւ հիանում որ մեր նորածին երկրում արուեստը արագ թափով էր զարգանում: Մի քանի անգամ ներկայ եղանք «Անուշ» օպերայի բեմադրութեանը, որն այն օրերի իմաստով արուեստի մի գլուխ գործոց էր, իր բեմական սքանչելի թեքնիքով: Օրուայ սիրուած երգիչ-երգչուհիներն էին Շարա Տալեանը եւ Հայկանուշ դանիէլեանը: Այստեղ չիշեմ որ կնոջս եղբայր՝ Սիւնոս Յովհաննիսեանը, որն Հայաստան էր եկել մի խումբ հայ որբերի հետ, շնորհիւ իր բնատուր ձիրքի եւ սաղմուտի, արդէն սիրող դերասանի համբաւ ունէր, եւ աշխատում էր Մուսիկեանի անուան թատրոնում, նա մի քանի տարի յետոյ մեկնեց Մոսկուա թատերական արուեստը ուսունասիրելու եւ կատարելագործելու համար: Սիւնոսը միշտ իր թատրոնի տոմսերը յատկացնում էր մեզ: 1929 թուի Նոյմբերին, թողեցինք Պողոս-Պետրոս եկեղեցու բակը եւ տեղափոխուեցինք Խորհրդային Մեր տանտէր յայտնի Լեւոն Չալալովին էր, որն մի քանի տներ ունէր Երեւանում: Այդ տան հետ կապուած են քաղցր չիշատակներ, որտեղ ապրում էր 12 ընտանիք, ու բակը լեցուն էր մի քանի տասնեակ երեխաներով:

**ԱՐԱՐԱՏ ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ**

Արարատ Կաթնատնտեսութեան Հիմնարկը (Արտել) 70 անդամ ունէր: Անդամները պարտաւոր էին կովերից ստացած կաթը յանձնելու հիմնարկին: Անդամներից իւրաքանչիւրը պահում էր 5-10 առողջ եւ ընտիր կովեր: Ես էլ անդամ էի այդ հիմնարկին: Լաւ վիճակ ունէինք բոլորս էլ, այդ պատճառով հասարակութեան մէջ ճանաչուած էինք որպէս ունեւոր մարդիկ: Սակայն կամաց-կամաց սկսուեց որոշ խստութիւններ մեր դէմ: Այդ պատճառով մի քանի անդամներ հրաժարուեցին. ծախեցին կովերը, եւ ուրիշ աշխատանքի դիմեցին: Հացը պետական խանութներում էժան էր, բայց բաւարար չափով չէր տրամադրւում ժողովրդին, իսկ ազատ շուկայից գնելու համար շատ թանգ պիտի վճարէինք:

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)

**ATLANTIS**  
RESTAURANT AND NIGHT CLUB

**FRIDAY NIGHTS AT ATLANTIS**  
**ARABIAN NIGHTS**

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHELAIH DANCERS.

authentic cuisine  
full hookah bar  
VIP membership  
full cocktail bar  
live belly dancing  
live music and DJ

**ATLANTIS**  
RESTAURANT AND NIGHT CLUB  
626.449.4599  
162 N. SIERRA MADRE BLVD.  
PASADENA, CA 91107



### ՍԱՌՑԱՐԱԸ ՅԱՌԱՋԱՑՆՈՂ ԽՄՈՐՈՒՄՆԵՐՈՒ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ

#### Շարունակում է 1-ին

ըմբռնած» էին, եւ այլն, ինքնարդարացու մնալով, որոնք էին դադարեցրած ծաղիկի բլուրիկը:

Նոյն ամօթալի չմեղանքի դեռակատարութիւնը բեմադրած էր իր անփառունակ նախորդը՝ Քոչարեան կոչեցեալը, որ Սթրասպուրկի միջազգային քաղաքական մէն դաւանանաբար յայտարարեց, թէ Քի Ռէսթի մէջ իր համաձայնութիւնը տուած է ազատագրուած տարածքները յանձնելու Ատրպէյճանին, եւ եթէ այդ տարածքները մինչեւ օրս յանձնուած չէին՝ Պատնառը Ատրպէյճանի արմատականութիւնն է: Իսկ ինչ կը վերաբերի բռնագրաւուած Արեւմտահայ հողերուն՝ ան գարշելի ուրացումով մը պիտի յայտարարէր, թէ Հայաստան իրաւական տուեալներ չունէր այդ հողերը պահանջելու թուրքիայէն:

\*\*\*

Ամէն դէպքին, կը մնայ հարցական մը:

Արդեօ՞ք տարբերակն պոռկուումներ էին ազերի հողերը վերադարձնելու, Արեւմտահայ բռնագրաւուած պահանջատիրութեան օրինաւոր հիմունքներ չունենալու եւ կամ Ցեղասպանութեան հարցի քննարկման խառն յանձնախումբի մը կազմութեան մասին եղած անպատասխանատու յայտարարութիւնները, որոնք կու գային ջուր լեցնելու թշնամի ջաղագրին: Թէ՞ ոչ, նախապէս նենգամտաբար նիւթուած, որոնցումն ու ժողովուրդին բազկերակը շոշափելու կոչուած փորձառական ծրագրերն էին յետագային գործնականացնելու համար: Կը մտածենք, թէ այդպէս է: Տարբերակներ գործունէր այստեղ: Այդ յայտարարութիւնները, ինչպէս դիտել տուի մեր վերջը, հետեւանք էին կարգին քննարկումներու, ինչպէս վերջերս եկան վկայելու թուրքաշտօնական աղբիւրներ:

Համաձայն թրքական հաւաստի աղբիւրներէն՝ «Հիւրրիէթ» օրաթերթի 18 Յուլիս ք. համարին մէջ լոյս տեսած հաղորդագրութեան, ընթացիկ ամսուան ընթացքին, ժընեւի մէջ գաղտնաբար տեղի ունեցած են օրերու վրայ երկարած դիւանագիտական հանդիպումներ թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ: Բարեկալէր էր նպատակը երկու երկիրներու յարաբերութիւնները: Այս կապակցութեամբ, թուրք արտաքին գործոց նախարար Ալի Պապանան յայտարարած է մամուլը ներկայացուցիչներուն.

«Մենք կապերու մէջ ենք հայ գործակիցներու հետ երբեմն երբեմն: Կարելի է քննել այն խաղաղ կերպերը, որոնցմով կարելի է բարելաւել երկու երկիրներու յարաբերութիւնները»

\*\*\*

Ծանօթ է մեզի երկու երկիրներու յարաբերութիւնները բարելաւելու կոչուած թուրքիոյ կողմէ սահմանուած հիմնական նախապայմանը, որ կը պարտաւորեցնէր իր հայ բանազնացները, որ ի սկզբանէ եւ երբեք չէին ճանդարդանալ ո՛չ Ցեղասպանութեան եւ ո՛չ հողային պահանջատիրութեան հարցերուն: Թուրքիա կը մերժէ խօսիլ այդ հարցերու մասին:

Արդեօ՞ք մեր կողմէ տարբերակն բնութագրուող վերոյիշեալ անպատասխանատու, այլ անկումային յայտարարութիւնները լոկ գզգզական պոռկուումներ են, թուրք դիւանագիտութեան գոհացում տալու յղացումներ՝ Քի Ռէսթի, Լիւսինապուրկի, ժընեւի կամ Մոսկուայի մակարդակի ժողովներու ձգտուած մթնոլորտը բարեխառնելու համար, այն յոյսով, որ այդ դիւանագիտութիւնը վերջ մը կը նայ սահմանել Հայաստանի տնտեսական շրջապատումին եւ բարելաւել Հայաստանի եւ թուրքիոյ յարաբերութիւնները:

Ինչ ալ ըլլան դրդապատճառները հայրենի իշխանութիւնները պարտին լաւ իմանալ, թէ խաբկանք է ապա ինչի թուրք դիւանագիտութեան, որ սադրանքներու ուստայն մըն է սոսկ: Թուրքիոյ կողմէ հայաստանցի ապօրէն աշխատողներու հանդէպ ցուցաբերուած բարեացակամ վերաբերմունքները, երեւան-Անթալիա գրօսաշրջիկութեան միակողմանի զարգացումը, հայ-թուրք հանդիպումները ժընեւի մէջ բարեմիտ եւրոպան տպաւորելու լարախաղացութիւններ են լոկ կարենալ մուտք գործելու համար եւրոմիութեան մէջ:

Միամտութիւն է ակնկալել թուրքիայէն դոյզն գիշում եւ ինչ որ փոքր դրական ձեռքբերում: Անոնց գիւր՝ հայ ժողովուրդի հողային եւ Ցեղասպանութեան նանաչման պահանջատիրութեան հրաժարիլն է: Իսկ հայ ժողովուրդի հողային ու Ցեղասպանութեան նանաչման պահանջատիրութիւնը թուրքիայէն, ոչ միայն անժամանցելի է, այլ նաեւ՝ անվերանայելի: Հայ ժողովուրդը վերստին գոհը պիտի չդառնայ թուրքիոյ սարքած բոլորին ծանօթ այդ հնամաշ խաղերուն

Ամէն պարագային, թուրքիա լաւ գիտէ այս պարագան:

### ԻՐԱՔԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԱՒԱԳ ԱՐՔԵՊՍ. ԱՍՏՈՒՐԵԱՆԻ ՅԵՏ

#### Շարունակում է 16-ին

ներ, ինչպէս ըսուեցաւ, արտագաղթած են տարբեր վայրեր, որոնց մէջ Հայաստան: Դժբախտաբար, Հայաստան գաղթողներու պարագան կը մնայ ինքզնիքով: Անոնց մէջ ոմանք, Հայաստանէն վերադարձած են Իրաք կամ գաղթած են Ամերիկա, Հայաստանի մէջ իրենց վիճակուած ճակատագրի պատճառաւ, տնային, գործի, ապահովութեան տեսակէտէ: Հայաստանի իշխանութիւնները եւ այլ միջազգային բարեսիրական կազմակերպութիւնները պարտաւոր են անհրաժեշտը տնօրինելու, որպէսզի Հայաստան արտագաղթողները շարունակել մնալ հոն, եւ ոչ թէ

դժգոհութեամբ անգամ մը եւս արտագաղթեն...

#### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐՑ

Սրբազանին հետ նաեւ խօսեցանք հայ եկեղեցւոյ ներկայ կացութեան մասին, մասնաւորաբար նոյն գաղութէն ներս գոյութիւն ունեցող երկու առաջնորդարաններու մասին, որ հակաօրինական շարունակուող կացութիւն մըն է: Սրբազանը շեշտեց Հայց. եկեղեցւոյ միասնականութեան մասին, Ս. էջմիածնի գլխաւորութեամբ եւ մաղթեց որ ժամանակի ընթացքին կը հարթուին գոյութիւն ունեցող դժուարութիւնները, եւ Հայց. Առաք. եկեղեցին կը գտնէ իր ներքին խաղաղութիւնը եւ օրինական կանոնաւոր վիճակը:

### «ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ» ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԻՄՆԱՐԿ

#### Շարունակում է 18-ին

Յառաջիկայ շաբաթներուն եւ ամիսներուն հայերէնի ուսուցիչները իրենց յաճախակի հանդիպումներով պիտի խմբագրեն ու վերջնական ձեւի բերեն երկօրեայ աշխատանքներու արդիւնքները, որոնց պիտի յաջորդեն անոնց կիրարկութիւնը, ինչպէս նաեւ ծնողներու եւ աշակերտներու հետ բացատրողական կամ համոզական

աշխատանքները: Վերջինս կարեւորութեամբ արձանագրուեցաւ, որովհետեւ նորահաս ծնողներու սերունդը պէտք ունի նախ տեղեակ ըլլալու, թէ հայցի կրթութեան ու դաստիարակութեան գործընթացը մեր դպրոցներու մէջ բացարձակապէս ետ չի մնար ժամանակակից մանկավարժական նուաճումներէն, եւ հայցի կրթութիւնը՝ կողմն ու առաքելութիւնն է հայ դպրոցին՝ ամերիկեան որակաւոր ուսումը շամբելուն աւելնելով:

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...

**Մեծ ժողովրդականութիւն Վայելող Կլէնտէլի AMGA 280-րդ Ալիքը Այժմ Կը Սփռուի GlobeCast Արբանեակային Հեռատեսիլով Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի Ամբողջ Տարածքին**

**Դուք Կրնաք Դիտել Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերլուծութիւններ Երաժշտական Հաղորդումներ - Եւ այլն**

**Մանրամասնութիւններու Համար Հեռաձայնել 818.547.9696**

### ՔԱՉ ՆԱԶԱՐ

### ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30

Կլէնտէլի 280-րդ կայանից

### ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

**ՀԵՌՈՒՍՏՍԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ**

CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔԵՐԵՍԵՆՆԵՍ)

GLOBACAST SATELLITE

ՀԻՆԳՇԱՔԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00



**Merrill Lynch**  
INVESTMENT BANKING

**JACK KALANJIAN**  
Professional Financial Advisor

Corporate Center Pasadena  
225 So. Lake Avenue  
Pasadena, CA 91101  
(626) 396-2825 Direct  
(626) 376-4665 Fax  
jack\_kalanjian@ml.com

**“Helping the Armenian Community Build Wealth”**

**ՄԱՐԶԱԿԱՆ**

**ՈՒԵՖԱ-Ի ՄՐՑԱՇԱՐՔԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ  
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒՆ  
«ՓԻԼԻՆԻԿ», «ԱՐԱՐԱՏ» ԵՒ «ԲԱՆԱՆՑ»  
ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԿՐԵՑԻՆ**

«Անորտոսիս» (Կիպրոս) - «Փիլինիկ» 1-0

Հայաստանի ախոյեան Երեւանի «Փիլինիկ»ը Ախոյեանների լիգայի որակաւորման առաջին փուլի առաջին խաղում հիւրընկալուելիս 0:1 հաշուով զիջեց կիպրական «Անորտոսիս»ին:

«Փիլինիկ»ի հանդիպումից առաջ պաշտպանական տակտիկա էր ընտրել հանդէս գալով 4+5+1 մարտավարութեամբ: Ողջ հանդիպումը անցել է «Անորտոսիս»ի բացառապէս առաւելութեամբ: Կիպրացիները «Փիլինիկ»ի դարպասի մօտ բազմաթիւ վտանգաւոր պահեր են ստեղծել: Մի քանի անգամ գնդակ է ետ է մղուել դարպասաձողից: «Փիլինիկ»ին բազմիցս փրկել է նաեւ դարպասապահ Գրիգոր Մելիքսեթեանը: 72-րդ րոպէին Կարէն Դոնոպեանը սեփական տուգանայինում ձեռքով խաղ է թող տուել եւ մրցավարը անմիջապէս 11 մեթրանոց է նշանակել, որ անվրէպ իրացրել է Յունաստանի հաւաքականի նախկին ֆուտպոլիստ Նիկոլայոս Ֆրոտոսը: Պարտուելով նուագագոյն հաշուով, «Փիլինիկ»ը դեռ հնարաւորութիւններ պահպանում է յաջորդ փուլ դուրս գալու համար:

«Արարատ» - «Բելինցոնա» (Շուէտ) 0-1

Երեւանի «Արարատ»ը ՌԻԵՖԱ-ի գաւաթի խաղարկութեան որակաւորման առաջին փուլի առաջին խաղում Աբովեանի քաղաքային մարզադաշտում 0:1 հաշուով զիջեց շուէտական «Բելինցոնա» խումբին: Կողմերի հնարաւորութիւնները հանդիպումից առաջ հաւասար էին գնահատուած: Խաղը սկսուեց հաւասար պայքարում եւ որոշ ժամանակ խումբերը պարզապէս ուսումնասիրում էին միմեանց: «Արարատ»ը փորձում էր ակտիւութիւն ցուցաբերել, սակայն հայ ֆուտպոլիստներին չէր յաջողում համեմատելի մրցակցի տուգանային հրապարակ:



«Բելինցոնա»ի հակադրոհները աւելի վտանգաւոր էին, սակայն եւս ունեւ գոլային պահ ստեղծել հիւրերին չէր յաջողում: Հաշիւը բացեց 21-րդ րոպէին, երբ «Արարատ»ի դարպասապահ Գէորգ Պրազեանը դիրքային կոպիտ սխալ թոյլ տուեց, իսկ պաշտպանները չկարողացան վնասագերծել Գաշիին, որի գլխի հարուածից յետոյ գնդակը ետ մղուեց դարպասաձողից, սակայն վրայ հասած Ալեանդրո Մանգիարատին շեշտակի հարուածով գրաւեց դարպասի հեռաւոր անկիւնը:

«Ռեդ Բուլ» (Աւստրիա) - «Բանանց» 7-0

Ֆուտպոլի Հայաստանի փոխ-ախոյեան «Բանանց»ը նոր ուկրաին սահմանեց՝ Հայաստանի ակումբային ֆուտպոլի պատմութեան մէջ՝ 0:7 հաշուով Չայցբուրգում զիջելով «Ռեդ Բուլ» խումբին: Եւրագաւաթների խաղարկութիւնների պատմութեան մէջ, սա հայկական խումբերի ամենախոշոր հաշուով կրած պարտութիւնն էր:

«Բանանց»ը այս հանդիպմանը ներկայացել էր ոչ մարտական կազմով, քանի որ Աւստրիայի մուտքի վիզա չէին ստացել Մաքսիմ Յիգալկոն, Սեմիոն Մուրադեանը եւ Նոա Կաստլեն, ինչպէս նաեւ աւագ մարզիչ Աշոտ Բարսեղեանը: Բացի այդ, աւելի վաղ ակումբը հրաժարուել էր փորձառու 4 ֆուտպոլիստների՝ Արամ Յակոբեանի, Ռոմիո Ջենեբեանի, Անդրէյ Չերեկոյի եւ Կարէն Ալեքսանեանի ծառայութիւններից: Նման իրավիճակում «Բանանց»ում մեծ թիւ էին կազմում երիտասարդները, որոնք պէտք է պայքարէին Աւստրիայի ամենահարուստ ակումբի՝ «Ռեդ Բուլ»ի դէմ ՌԻԵՖԱ-ի գաւաթի որակաւորման առաջին փուլի առաջին խաղի շրջանակներում:

Այս խումբերի միջեւ կայանալիք պատասխան հանդիպումը կը կայանայ Յուլիսի 31-ին Աբովեանի քաղաքային մարզադաշտում:

**ՇԱԽՄԱՏ**

**ԱՐՄԱՆ ՓԱՇԻԿԵԱՆԸ ՅԱՂԹԵՑ ՍԵՒԱՆԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻՆ**

Սեւանի շախմատի միջազգային աւանդական մրցաշարի յաղթող դարձաւ հայ շախմատիստ Արման Փաշիկեանը, որ 9-ը հնարաւորից վաստակելով 6.5 միաւոր՝ գրաւեց առաջին հորիզոնականը:

Վերջին 9-րդ տուրում խաղող ելք գրանցեց Հրանտ Մեղրումեան - Արման Փաշիկեան, Զորջ Մեյեր - Աւետիք Գրիգորեան, Զաւէն Անդրէասեան - Յիւնչատ Զոու, Լեւան Պանցուլիա - Սերգէյ Ժիգալկո եւ Մամուէլ Տէր-Սահակեան - Ամին Բասեմ պարտիաներում: Խաղող արդիւնքներ էին գրանցուել նաեւ 8-րդ տուրի բոլոր պարտիաներում: Իսկ ահա մինչ այդ կայացած տուրերը ընթանում են բաւական արդիւնաւէտ պայքարում: Փաշիկեանը մրցաշարի ընթացքում 4 յաղթանակ տօնեց՝ պարտութեան մատնելով Բասեմին, Մեյերին, Պանցուլիային եւ Գրիգորեանին, իսկ միւս պարտիաները աւարտեց ոչ-ոքի:

Փաշիկեանին 6 միաւորով յաջորդեց չինացի Յիւնչատ Զոուն, որի համար ճակատագրական եղաւ 2-րդ տուրում Մամուէլ Տէր-Սահակեանի կրած պարտութիւնը: Լաւագոյն եռեակը 5.5 միաւորով եզրափակեց բելառուս Սերգէյ Ժիգալկոն: Բոլոր ժամանակների ամենաերիտասարդ հայ գրոսմայստերը՝ Մամուէլ Տէր-Սահակեանը, 4.5 միաւորով հանգրուանեց 5-րդ հորիզոնականում:

**ԾԱՆՐԱՄԱՐՏ  
2 ՐԱՅ՝ ՆՈՅՆ ԲԱՃԱՅԻՆ ԿԱՐԳՈՒՄ**

2008թ. ամառային օլիմպիական խաղերի անշուշտ ամենամեծ սպասելիքները կապուած են 77կգ քաշային ծանրորդ Գէորգ Դաւթեանի հետ: Եւրոպայի առաջնութեան կրկնակի յաղթողը միակ հայ մարզիկն է, որ 2007թ. աշխարհի առաջնութիւններում արծաթէ մետալ է նուաճել:



Եւրոպայի առաջնութիւններում յատկապէս հայ ծանրորդները վերջին տարիներին մեծ թուով մետալներ են նուաճել, նրանցից մի քանիսը դարձել են ախոյեան, սակայն աշխարհի առաջնութիւններում ամենամեծ յաջողութեանը հասել է Դաւթեանը:

Խօսքը 2007թ. աշխարհի առաջնութեան մասին է, որտեղ Գէորգը շատ մօտ էր ախոյեանի կոչմանը, սակայն ի վերջոյ 1կգ-ով զիջեց բուլղարացի Իվան Ստոյցովին եւ բաւարարուեց արծաթէ մետալով:

Իվան Ստոյցովը, ինչպէս եւ միւս բուլղարացիները, արգելուած իսթանիզների օգտագործելու համար որակազրկուած են, ուստի Դաւթեանի հիմնական մրցակիցներից մէկը դուրս է մնացել պայքարից:



77կգ քաշայինների պայքարում մետալի եւս մէկ ունեւ յաւակնորդ է Արա Խաչատրեանը, որ Եւրոպայի վերջին 2 առաջնութիւններում զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը, իսկ աշխարհի 2006թ. առաջնութիւնում արծանացել պրոնզէ մետալի:

Մետալի յաւակնորդներ են Պերեպեչինովը, Դաւթեանը եւ Խաչատրեանը, սակայն այս քաշային կարգում մասնագէտները ֆաւորիտ են համարում թուրք Տաներ Սադիրին՝ 2004թ. Աթէնքի օլիմպիական խաղերի յաղթողին: Պէտք է մոռանալ նաեւ չինացի Լի Հոնգլին, որը աշխարհի 2007թ. առաջնութիւնում գրաւեց 3-րդ հորիզոնականը:

**ՍԵԼԻՆԵ ԴԱԼՈՒՋԵԱՆԸ ՄԻԱԿ ՀԱՅ ԾԱՆՈՐԴՈՒՅԻՆ  
ՓԵՔԻՆՈՒՄ**

Հայաստանի կանանց ծանրամարտի հաւաքականը Փեքինում Օգոստոսին կայանալիք օլիմպիական խաղերում կը ներկայանայ ընդամէնը մէկ ծանրորդով. ասպարէզ դուրս կը գայ 63կգ քաշային Մելինէ Դալուգեանը:



20-ամեայ մարզուհին Եւրոպայի վերջին 2 առաջնութիւններում լաւագոյն է իր քաշային կարգում: 2007թ. Ֆրանսայում, իսկ 2008թ. Իտալիայում Դալուգեանը նուաճել է ախոյեանի կոչում ունենալով մեծ առաւելութիւն մրցակցուհիների նկատմամբ: Մելինէի լաւագոյն արդիւնքը եղել է 2008թ. Եւրոպայի առաջնութիւնում, երբ նա երկամարտի արդիւնքում գլխավերելում պահեց 235կգ: Դա միանգամից 9 կգ-ով աւել էր, քան արծաթէ մետալի արծանացած Թուրքիայի ներկայացուցիչ Սիբել Սիմսեկի արդիւնքը:

Աշխարհի առաջնութիւններում Մելինէի լաւագոյն արդիւնքը եղել է 2006թ. նուաճած պրոնզէ մետալը: Յաջորդ տարի կայացած աշխարհի 2007թ. առաջնութիւնում Դալուգեանը արդէն չկարողացաւ մտնել լաւագոյն եռեակ՝ բաւարարուելով միայն 4-րդ հորիզոնականին: Այս առաջնութիւնը ցոյց տուեց, որ Դալուգեանը լուրջ մրցակիցներ ունի եւ լաւագոյն դէպքում կարող է պրոնզէ մետալ նուաճել Փեքինում կայանալիք խաղերում:

63կգ. քաշայինների պայքարում ֆաւորիտը Չինաստանի ներկայացուցիչ Հայքսիա Լիուն է: Պրոնզէ մետալի համար պայքարում Դալուգեանի հիմնական մրցակիցը կը լինի Հիւսիսային Կորեան ներկայացնող Սուկ Հիոն Պարկը:

Մելինէ Դալուգեանը պայքարի մէջ կը մտնի Օգոստոսի 12-ին՝ Երեւանի ժամանակով 12:30-ին:

**ԽԱՆՐԱՄԱՐՏԻ ԵՒՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՍԵՆՈՒԹԻՒՆ**

Ֆրանսիայի Ամիեն քաղաքում մեկնարկել է ծանրամարտի Եւրոպայի պատանեկան առաջնութիւնը, որին մասնակցում է նաեւ Հայաստանի հաւաքականը:

Առաջինը ասպարէզ է դուրս եկել 50կգ քաշային Սմբատ Մարգարեանը: Այս քաշային կարգում ոսկէ մետալի համար պայքարը ընթացել է հայ ծանրորդի եւ թուրք Ալգուլ Իսմետի միջեւ:

Պոկում վարժութիւնում Սմբատը բարձրացրել է 88կգ, իսկ Իսմետը՝ 92 կգ եւ նուաճել առաջին հորիզոնականը: Հրում վարժութիւնում Մարգարեանը գլխավերելում պահել է 113կգ՝ 1 կգ-ով զիջելով թուրք մարզիկին: Երկամարտում ցուցց տալով 201 կգ արդյունք Սմբատ Մարգարեանը դարձել է Եվրոպայի փոխախոյեան, իսկ թուրք ըմբիշը 206կգ արդյունքով դարձել է ախոյեան եւ սահմանել Եւրոպայի նոր մրցանիշ:

### ՈՒԻԼԻԵՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿ

Շարունակում է 7-էն

Իր խօսքի աւարտին, Տօթթ. Գազանճեան հանդիսավարութիւնը կը յանձնէր Միութեան մէկ ուրիշ ժրջան եւ աշխոյժ անդամին, վերջին տարիներու գրական ձեռնարկներու կազմակերպութեան եւ գործադրութեան մէջ աչքառու դեր ունեցող Լիլիթ Քէհէեանին, որ իրեն յատուկ պերճախօսութեամբ պիտի շարունակէր յայտագիրը: Լիլիթ Քէհէեան իր հանդիսավարութիւնը սկսաւ մեծ գրողի մասին անգլերէն եւ հայերէն լեզուներով հետաքրքրական տեղեկութիւններով, յատկապէս գինք տեղաւորելով ամերիկեան նախ եւ ապա հայ գրականութեան անդամներին ներս: Ապա բեմ հրաւիրեց օրուայ գլխաւոր բանախօս, ծանօթ մտաւորական եւ մրցանակներու արժանացած հեղինակ, Պէյրութէն մինչեւ Լոս Անճելըս, Սարգիս Վահագնը: Վահագնի ինքնաբերական խտրական ելոյթը, շուրջ 20 վայրկեաններու ընթացքին, բաւարար չափով յստակ դարձուց Ուիլիամ Սարոյեանի գրականութեան բազմաթիւ եւ բազմա-տեսակ յատկանիշերը: Ան շեշտեց Սարոյեանի մշակած գրականութեան իւրաքանչիւր կէտէն շարունակեալ իր յարգանքը, գրականութիւն մը որ ուր միջոցաւ Սարոյեան հայերը ճանչցուց ընթերցող միջազգային հասարակութեան, ինչպէս նաեւ դիպուկ կերպով նկարագրեց ամերիկացիները, իր ստեղծած նկարագիրներու ընդմէջէն: Սարոյեանի գրականութիւնը յատկանշուած է լաւատեսութեամբ, յոյսով, զգացականութեամբ աւելցուն, ինչպէս նաեւ ընկերային արդար ակնկալութիւններով: Ան չվարանեցաւ խարանդու անարդարութիւնները, եւ պաշտպանելու համետ դասակարգի իրաւունքները: Միջազգային չափանիշերով, ան ամենէն ծանօթ գրական դէմքն էր իր ժամանակին,

հրատարակելով շուրջ 60 թիւ գիրքեր, որոնք արդէն իսկ թարգմանուած են աւելի քան 12 լեզուներու եւ ծախուած միլիոնաւոր օրինակներով: Իւրաքանչիւր նկարագիր մը ունէր Սարոյեան, որ նոյնիսկ մերժեց իրեն պարգեւուած «Pulitzer» ցանակը: Ինք կը կարծէր թէ իր պարագային բնութիւնը պիտի ինչպէս իրեն մահը:

Իր ժողովուրդի եւ անոր հայրենիք Հայաստանի նկատմամբ մեծ սէր կը տածէր Սարոյեան: Իր մահէն շուրջ տարի մը ետք, իր աճիւններուն կէսը Հայաստան փոխադրուեցաւ, իսկ միւս կէսը մնաց Ֆրեզնօ: Սարոյեանի թատերական երկերու մէկ կարեւոր մասը տակաւին կը մնայ տեսակ մը պատանդ, որոշ շրջանակներու կողմէ, որոնք կը մերժեն զանոնք հրատարակել: Վահագն իր գեղուցումը աւարտեց յուսալով որ առիթ կ'ընծաւուր սոյն երկերու հրատարակման, ի մեծ բաւարարութիւն ընթերցող հասարակութեան: Ուշի ուշով ունկնդրութեան արժանացած Վահագնի դասախօսութիւնը մեծապէս գնահատուեցաւ ներկայ հասարակութեան կողմէ: Բեմ հրաւիրուելով սիրուած արուեստագէտ, դաշնակահար փրոֆ. Լեւոն Աբրահամեան երկու հրաշալի կտորներ նուագեց, մէկը Կոմիտասէն, իսկ երկրորդը՝ Շոփէնէն: Յայտագրի ընթացքին, Աբրահամեան կրկին անգամ ներկաները հմայեց Շոփէնի մէկ հռչակաւոր կտորի մատուցումով:

Լիլիթ Քէհէեան եւ երիտասարդ եւ համակրելի օր. Գալատեան ընթերցեցին Սարոյեանի երկու պատմուածքները - մէկը սպիտակ ձիու մասին, իսկ երկրորդը անպատին մէջ նուննի ծառեր տնկելու մասին: Բոլոր ընթերցումներն ալ լաւ ընտրուած եւ Սարոյեանի դատելու, դիտելու եւ նկարագրելու կարողութիւնները արտայայտ-

ող ընտրութիւններ էին:

Ապա Լիլիթ Քէհէեան բեմ հրաւիրեց օրուայ երկրորդ բանախօսը, զայն ներկայացնելով իբրեւ ծանօթ մտաւորական, բազմաթիւ գրքերու հեղինակ եւ Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան հիմնադիր նախագահ Թորոնթո ֆոսթաճեանը: Պէտք է ըսել որ ֆոսթաճեանի ելոյթը մեծ հետաքրքրութեամբ եւ խիստ հաճելի մանրամասնութիւններով յագեցած ելոյթ մըն էր, հանդիսանալով դրուագներ մեծ գրողի կեանքի տարբեր շրջաններէն առնուած: Փոսթաճեան նկարագրելու, պատմելու մեծ շորհք մը ունի, եւ կարողացաւ Սարոյեանի դէմքը յստակ դարձնել իր ունկնդիրներուն: Դրուագները կը ներկայացնէին Սարոյեանի հանդիպումներէն շատերը այլ հայ եւ օտար գրչակիցներու հետ, Մոսկուա, Հայաստան եւ այլուր, ինչպէս նաեւ որոշ, երբեմն անախորժ պատահարներ իր ընտանեկան կեանքի հետ կապուած: Մեծ հաճուքով ունկնդրուեցաւ ֆոսթաճեանի ելոյթը ներկաներու կողմէ:

Յայտագրէն դուրս, Քէհէեան բեմ հրաւիրեց գրող Արմէն Պողոսեանը, որ նաեւ իւղանկարով, բեմի վրայ գետեղուած, Սարոյեանի դիմագիծը ներկայացուց հետաքրքրական, քիչ մը զարտուղի գծերով: Ան ընթերցեց ինքնագիր պատմուածք-

գրութիւն մը, Սարոյեանի նուիրուած, որ առնչուած էր մեծ գրողին հետ, Ֆրեզնոյէն մինչեւ իր ծննդավայր՝ Պիթլիսը: Հետաքրքրական եւ իւրաքանչիւր գրութիւն մըն էր:

Նախագահելու համար Համագային Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան Պատգամաւորական Ժողովին Մայր Աթոռ Ս. Էջմիածին գտնուող հովանաւոր Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի փոխարէն յայտագրի աւարտին ելոյթ ունեցաւ Առաջնորդարանի դիւանապետ՝ Տէր Սիփան Ա. Քհնյ. Միսեան: Ան գնահատեց օրուայ ձեռնարկը, ինչպէս նաեւ անոր բովանդակութիւնը:

Հանդիսավար Լիլիթ Քէհէեան շնորհակալութիւն յայտնեց յայտագրի մաս կազմող բոլոր անձնաւորութեանց, ինչպէս նաեւ ներկայ գրասէր հասարակութեան:

Սարոյեանի ծննդեան 100-ամեակի նուիրուած սոյն ձեռնարկը արդար յարգանքի եւ մեծարման առիթ մըն էր աշխարհահռչակ գրողին, ինչպէս նաեւ յոյժ կարեւոր իրագործում մը, որուն համար շնորհաւորանքի արժանի է Ամերիկայի Հայ Գրողներու Միութիւնը, որմէ կ'ակնկալուի նման որակաւոր նախաձեռնութիւններ, ի փառս հայ գրականութեան եւ անոր տարածման:

Թ. Ս.

### ՅԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

ՇԱՔԷ ԽԱՆՉԱՏԵԱՆ-ՊԱՐՍՈՒՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Կլէնտէյլի Տիկնանց Օժանդակ Մարմնի անդամուհիները իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի դստեր, Հալչպի Հ.Մ.Մ.ի վարչութեան եւ համայն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար իր քոյրերուն՝ Անահիտ Նալպանտեանին, Ռիթա Պուլանիկեանին եւ անոնց զաւակներուն եւ էօթէնի Պարսուսեանին:

### ՅԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

Ողբացեալ ԷԼԻԶԱՊԷԹ ԿԵՅՈՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Լիբանան) մեր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի բոլոր պարագաներուն, մասնաւորաբար իր դստեր եւ փեսային Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեաններուն: «Մասիս»

### ՅԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

Ողբացեալ ԷԼԻԶԱՊԷԹ ԿԵՅՈՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Լիբանան) Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեաններ իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեաններուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

### Հայ Թելեժամը Կը Վերադառնայ 18ը Ալիքի Վրայ

Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը

Շաբաթը 7 օր անվճար

Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեժամ (818) 982-2400

\*\*\*\*\*

### The Armenian Teletime Is Back On Channel 18

Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day 7 Days Per Week, Free

No Subscription Fee - Plus 40 Additional Channels

For info call The Armenian Channel (818) 982-2400

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ Palm Springs

PALM SPRINGS ԱՐՉԱՎՈՒՐԴԻ ԳԼԱՑՈՂ ԳԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խողաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450



Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Չեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
massis2@earthlink.net



# Mission Wine & Spirits

**JOHNNIE WALKER**  
Black Label  
Scotch Whisky



**17<sup>99</sup>**

**JOHNNIE WALKER**  
Black Label  
Scotch Whisky 1.75L



**46<sup>99</sup>**

**JOHNNIE WALKER**  
Gold Label  
Scotch Whisky



**46<sup>99</sup>**

**JOHNNIE WALKER**  
Blue Label  
Scotch Whisky



**109<sup>99</sup>**

**JOHNNIE WALKER**  
Green Label  
Scotch Whisky



**36<sup>99</sup>**

**JOHNNIE WALKER**  
Red Label  
Scotch Whisky



**14<sup>99</sup>** 750ml  
**26<sup>99</sup>** 1.75L

**Hennessy**  
COGNAC



**32<sup>99</sup>** VSOP  
**20<sup>99</sup>** VS

**Hennessy**  
COGNAC  
XO



**94<sup>99</sup>**

**PATRÓN**  
TEQUILA  
SILVER or REPOSADO



**33<sup>99</sup>**

**Don Julio**  
1942  
TEQUILA



**69<sup>99</sup>**

**Don Julio**  
AÑEJO  
TEQUILA



**35<sup>99</sup>**

**Don Julio**  
BLANCO  
TEQUILA



**24<sup>99</sup>**

TEQUILA  
**CAZADORES**  
REPOSADO



**19<sup>99</sup>**

**Jose Cuervo**  
TEQUILA ESPECIAL



**10<sup>99</sup>** 750ml  
**19<sup>99</sup>** 1.75L

**Crown Royal**  
CANADIAN WHISKY



**14<sup>49</sup>**

**Captain Morgan**  
RUM



**10<sup>99</sup>**

**SKYY**  
VODKA



**8<sup>99</sup>**

**Retel One**  
VODKA



**18<sup>49</sup>**

**GREY GOOSE**  
VODKA



**21<sup>99</sup>**

**BELVEDERE**  
VODKA



**19<sup>99</sup>**

**CÎROC**  
VODKA



**17<sup>99</sup>**

**IMPERIA**  
VODKA



**17<sup>99</sup>**

**SMIRNOFF**  
VODKA



**8<sup>99</sup>**

**CZAR'S GOLD**  
VODKA



**16<sup>99</sup>**

1785 E. Washington Blvd., Pasadena, CA 91104  
(626) 794-7026 • (626) 794-7368

Near the corner of Allen & Washington • Open Monday—Saturday 9 am - 8 pm  
[www.missionliquor.com](http://www.missionliquor.com)

\*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 07/31/08 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded  
• Prices subject to change without notice • No checks or credit cards  
All items are 750ml in size unless specified.